


Исследования
Восточной литературы
1912

891.99

4-30



1868w.

ՏԵԳՐԱՆ Գ. ՎԱՐԿԱՆՆԵՐՆՈՑ

12 MAR 2011

891.99

4-30

ւր.

Մ Ա Ն Ո Ւ Կ ==

== ԱՇԽԱՐՀՈՒՄ

1001
3939

22.11.
1999
8-215-3
18-5



Թ Ի Ճ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրամատյան փող., 6. Հեռախոս 566

08 AUG 2013

37.288

1103 JAN 51

ՀՈՎՈՒԻ ԱՂՈԹՔԸ



Քեզազուարճ Սևանայ լճի ափին ապրում էր մի բարեպաշտ հովիւ. ամեն անգամ, երբ նրան առիթ էր ներկայանում աչքերը դէպի ծովի խորքում թափնուած մենաստանը դարձնել, նրա շրթունքներն երկիւղածօրէն շշջում էին. «Ահա թէ սրտեղ կարելի է Աստուծուն յիառատ սրբտով աղօթել. երանի՜ թէ մի օր ինձ յաջողուէր այնտեղ աղօթելու փափազս կատարել. այն Ժամանակ մահն ինձ համար երանութիւն կըլինէր միայն»:

Աստուած բարի հովուի աղօթքը լսեց, և սա մի օր ուղտ գնաց Սևան: Եօթն օրն անցնելուց յետոյ ուխտաւոր հովիւը կամեցաւ վերադառնալ իր հօտերի մօտ: Բայց ծովը սաստիկ ալեկոծուած էր, և մենաստանի միակ նաւակը սպասում էր փոքր ինչ բարեյաջող եղանակի, որ վանահօրը դէպի ափ փոխադրէր:

Վերջապէս երկար սպասելուց՝ հովուի համբերութիւնը հատաւ, և նա մի փառաւոր առաւօտ

իր թաղիքեայ վերարկուն փռեց ծովի երեսին, ինքը վրան նստեց ու գնաց. ծովն իսկոյն հանդարտուեց:

Ծովի խաղաղութիւնը օգտուեց և վանահայրը. նրա նաւակն էլ հմուտ թիավարների դեկավարութեամբ անյապաղ դէպի յառաջ շարժուեց:

Նա ճանապարհի կիսումը հասաւ հովուին, որ լողում էր թաղիքի վրայ և անընդհատ կրկնում էր միևնոյն աղօթքը. «Աստուած, ես քեզ ողորմիմ. Աստուած, ես քեզ ողորմիմ»:

Վանահայրը վշտացած ու ցասկոտ ձայնով նկատեց. «Օրհնենա՛լ որդի, դու սխալ ես աղօթում՝ Աստուծուն. ասան. «Աստուած, դու ինձ ողորմիս. Աստուած, դու ինձ ողորմիս»:

Նաւակն առաջ սլացաւ իր հետ տանելով ալեգարդ եպիսկոպոսի սպիտակ մորուքը. հովիւը դանդաղօրէն հետևում էր նրան և անվերջ կրկնում. «Աստուած, դու ինձ ողորմիս. Աստուած, դու ինձ ողորմիս»: Սակայն նրա ուշքը բոլորովէն գրաւեցին երկնքով անցնող կռունկները, և նա մոռանալով վանահօր սովորեցրած աղօթքը՝ սկսեց դարձեալ իր առաջուանը կրկնել. «Աստուած, ես քեզ ողորմիմ. Աստուած, ես քեզ ողորմիմ»: Բայց իսկոյն մտաբերելով, որ ինքը սխալ է աղօթում՝ վեր կացաւ թաղիքի վրայից և ջրի վրայ վանահօր յետևից վազելով՝ սկսեց բարձրաձայն աղաղակել. «Սրբազան, սրբազան, ես

մոռացայ քո սովորեցրած աղօթքը նւ դարձեալ սխալ եմ աղօթում Աստուծուն»:

Եւ մենակեաց ալեոր վանահայրն այդ ահեղ հրաշքից կրկնակի դարհուրած՝ արտասուալից աչքերը դէպի երկինք յառեց, փառք տուեց Աստուծուն և ապա դառնալով հովուին՝ սրտառուչ ձայնով ասաց. «Գնան, որդեակս, գնան, կրկին քո իմացածի պէս աղօթիր, որովհետեւ Աստուած իրենն ղիմողների ոչ թէ խօսքերին է նայում, այլ սրտին»:



ՈՍԿԻ ՄԱՏԱՆԻ

Երբ հարուստ վաճառական Մութաֆը մեռաւ, նա՝ բացի անհաշիւ կարողութիւնից ու զանձերից՝ իր երեք որդիներին ժառանգութիւն թողեց և մի ազամանդեայ ծանրագին մատանի. այս մատանին նրա հանգուցեալ հայրը բերել էր Հնդկաստանից և, ինչպէս պատմում են, իր տեսակի մէջ եղել է մի հազուագիւտ բան:

Բայց ցաւն այն է, որ հէնց որ վաճառական Մութաֆը մեռաւ, շողակնեայ մատանին էլ կորաւ ու կորաւ:

Հօր մահը որդիների համար մի դժբախտութիւն էր, մատանու կորուստն էլ աւելորդ:

Եղբայրները շատ տեղ որոնեցին, շատերին հարց ու փորձ արին, բայց ոչ մի օգուտ. մատանին չկայ ու չկայ:

Վերջը պարզուեց, որ մատանին գողացել է եղբայրներից մէկը, բայց թէ՛ ո՞րը, շատ դժուար էր որոշել. ուստի եղբայրները գնացին դատուելու

կուսակալի մօտ, որ Սողոմոնի իմաստութեան և արդարադատութեան հռչակն ունէր:

Օրը շոգ էր, ճանապարհը երկար. արևն էլ վերևից անխնայ այրում ու այրում էր ճամբորդներին:

Ուղիղ կէսօրին երեք եղբայրները հասան մի աղբիւրի մօտ և նստան հաց ուտելու, հանգրտանալու:

Քիչ ժամանակ անցած՝ նրանց մօտեցաւ մի ուղտապան և հարցրեց. «Օտարական եղբայրներ, այս ռրտեղից էք դալիս և ո՞ւր էք գնում. արդեօք ճանապարհին ձեզ ուղտ չէ՞ պատահել»:

Եղբայրներից մէկը սլափախանեց. «Անծանօթ բարեկամ, թէ՛ ես քո ուղտը չեմ տեսել, բայց պէտք է որ նրա մի աչքը կոյր եղած լինէր»:

Երկրորդ եղբայրն ասաց. «Երևի քո ուղտը բռնաւորուած է եղել այսպէս. աջակողմը՝ մեղր, ձախակողմը՝ ձիթենու իւղ»:

Երրորդն ասաց. «Քո ուղտի առաջին ատամների մէջտեղինը, կարծեմ, վայր ընկած պիտի լինէր»:

Ուղտապանը մնաց զարմացած, թէ ի՞նչպէս այդ օտարականներն իր ուղտը չտեսած՝ այդպիսի ճշտութեամբ կարողացան նկարագրել նրան. և վերջն աւելացրեց. «Եղբայրներ, դուք իմ ուղտն անպատճառ տեսել էք, իսկ յետոյ կամ թաղցրել էք նրան, կամ ուրիշներին ծախել»:

եղբայրները բացէ ի բաց մերժեցին և ասացին, որ իրենք ուղտ չեն տեսել:

Ուղտապանը ճարը կտրուած հարցրեց. «Դուք ուր էք գնում»:

Եղբայրները պատասխանեցին. «Մենք գնում ենք կուսակալի մօտ դատուելու»:

Ուղտապանն ուրախացաւ. «Դէ, որ այդպէս է, ես էլ կըզամ ձեզ հետ կուսակալի մօտ. թող նա մեր դատաստանն էլ կտրէ»:

Եղբայրները համաձայնեցան. «Լաւ, գնանք»:

Գնացին:

Երբ կուսակալի մօտ եկան, ամենից առաջ նրան ներկայացաւ ուղտապանն ու գանգատուեց. «Տէր իշխան, այս երեք եղբայրները գողացել են իմ ուղտն ու ծախել, բայց յանձն չեն առնում»:

Կուսակալն ուղտապանից փաստեր ու վկաներ պահանջեց. ուղտապանն էլ կէտ առ կէտ պատմեց այն զրուցատրութիւնը, որ ինքն ունեցել էր աղբիւրի մօտ խորհրդաւոր եղբայրներին հետ:

Կուսակալ-դատաւորը փոքր ինչ մտածելուց յատոյ հարցրեց մեծ եղբօրը. «Եթէ դու ուղտը չես տեսել, ապա ո՞րտեղից ես իմանում, թէ նրա մի աչքը կոյր է»:

Մեծ եղբայրը պատասխանեց. «Ես ուղտի կոյր լինելը նրանից եմ իմանում, որ նա արածելիս ճանապարհի մի կողմին բուսած խոտերը

կերել էր, իսկ միւս կողմի խոտերին ամենեին չէր դիպել»:

Կուսակալը դիմեց միջակ եղբօրը. վերջինս պատասխանեց. «Ես ուղտի բռնան մի կողմը մեղր, իսկ միւս կողմը իւղ լինելը նրանից եմ իմանում, որ տկերը ծակ են եղել, և նրանցից ծորել է ճանապարհի մի կողմը մեղր, իսկ միւս կողմը՝ իւղ»:

«Ապա դու ի՞նչպէս իմացար, թէ ուղտի առաջին ատամները մէջտեղինը ընկած է եղել», դիմեց դատաւորը փոքր եղբօրը:

Սա էլ պատասխանեց. «Ձարմանալու ոչինչ չկայ. դա մի շատ պարզ բան է. ուղտը ճանապարհին արածելիս է եղել. բերանի լայնութեամբ տեղ գետինն այնպէս մաքուր էր, որ կասես մկրատով խուզած լինէր. միայն այդ մաքուր շերտի ուղիղ մէջ տեղով մի շարք խոտեր մնացել են ցից-ցից. դա պարզ նշան է, որ ուղտի միջին ատամը վայր ընկած պիտի լինէր»:

Դատաւորը տեսնելով, որ իրեն դիմողները հասարակ մահկանացուներ չեն, նախ քան իր վճիռն արտասանելը՝ հրամայեց փառաւոր ճաշով հիւրասիրել նրանց. իսկ ինքն իրեն այնպէս ձևացրեց, որ իբր թէ հեռանում է առանձին խորհրդակցելու, սակայն պահուեցաւ դռան ետևը և թաքուն աւանջ էր դնում նրանց խօսքերին:

Ճաշի ժամանակ եղբայրներից մէկն ասաց.
«Հացից մեռելահոտ է գալիս»:

Միւսն աւելացրեց. «Այս հացի մէջ արիւն
կայ»: Երրորդ եղբայրը բացականչեց. «Կուսա-
կալը ապօրինի դաւակ է»:

Զարմանքից կուսակալի բերանը բաց էր
մնացել: Նա իսկոյն վազ տուեց մօր մօտ և հե-
տաքրքրութեամբ հարցրեց. «Ասա, մայրիկ, այդ
սրտեղից կարող է պատահել, որ մեր հացից մե-
ռելահոտ է գալիս»:

Մայրը պատասխանեց. «Ճշմարիտ է, որդի,
այն արտը, որի ցորենից պատրաստուած է այս
հացը, գտնուում է հին գերեզմանատեղում»:

Կուսակալը զլուխը պտտեցնելով դիմում է
մեծ հարսին, որն այդ օրն ինքն էր հունցել
հացի խմորը. «Խելքդ ի՞նչ է կտրում, մեր այս
օրուայ հացի մէջ արիւն սրտեղից կարող է լինել»:

Մեծ հարսը պատասխանեց. «Այո, ճշմարիտ
է դա. վաղ առաւօտեան դեռ Աստուծու բարի
լոյսը չբացուած՝ ես հացը հունցելիս դանակ վեր-
ցրի եղունգներս մաքրելու. պատահմամբ մատս
կտրեցի և արիւնը հոսեց խմորի մէջ»:

—Այդ էլ ուրեմն ա՛յդպէս...

Սակայն ամենամեծ տարակուսանքի մէջ
կուսակալին ձգել էր իր ապօրինի դաւակ լինելու
հանելուկը, և նա հարցրեց. «Ասա, մայրիկ, մի-
թէ ես քո հարազատը չեմ, մի՞թէ ապօրինի եմ»:

Մայրը քնքշութեամբ պատասխանեց. «Մի
վրդովուհի, որդեակս. ինչ որ քո մասին ասել են
օտարականները, ճշմարտութիւն է: Դու եօթն
օրական մանուկ էիր, որ ես վաղ առաւօտեան
մեր աստիճանների վրայից քեզ ձեռներիս վրայ
տուն բերի. մնացածը քեզ յայտնի է»:

Կուսակալն իր մտքի մէջ շփոթուեց օտարա-
կանների ո՛վ և ի՞նչ մարդիկ լինելու վերաբեր-
մամբ, բայց աշխատելով երեսանց իրեն հանգիստ
ցոյց տալ՝ դուրս եկաւ հիւրերի առաջ և ուրախ-
ուրախ ասաց.

«Դ՜ռք, իմ թանկագին հիւրերս, ինչպէս
տեսնում եմ, սովորական խելքի ու հասկացողու-
թեան տէր մարդիկ չէք. ես բարձր եմ գնահա-
տում ձեր շնորհքն ու իմաստութիւնը. այդ պատ-
ճառով էլ նախ քան ձեր գործին մտիկ տալը,
կրկամենայի իմ կողմից ձեզ մի խնդիր առաջար-
կել»:

Եղբայրները համաձայնուեցին:

Դատաւորն սկսեց.

«Սրանից մի քանի տարի առաջ մեր երկ-
րում հետեւեալ զարմանալի դէպքը պատահեց.
մի սիրուն տղայ սիրահարուեց մի շատ սիրուն
աղջկայ հետ, բայց այդ նախշուն աղջկայ անսիրտ
ծնողներն իրենց աղջկանը նշանադրեցին մի ուրիշ
երիտասարդի հետ, որին նա ամենակին չէր սիրում:
Հարսանիքի օրն աղջիկը վերկացաւ բոլոր բազմա-

կաններն առաջ և ասաց. «Լսեցէ՛ք ամենքդ. ձեզ բոլորիդ էլ յայտնի է, որ ես չկամենալով իմ պառաւ հօրն ու մօր խօսքը գետին ձգել՝ համաձայնութեցայ այս ամուսնութեանը. սակայն ես սիրում էի մի ուրիշ երիտասարդի, և նրան իմ անդրանիկ սիրոյ անուանով մի սոսկալի երգում եմ արել, որ իմ հարսանիքի սեղանից վեր առնեմ ամենալաւ խնձորը և նուէր տանեմ նրան»:

«Արտասանում է այս խօսքերը բաջարի աղջիկը և բոլոր հանդիսականների ներկայութեամբ վերցնում է սեղանի վրայից ամենաընտիր խնձորը և դուրս գալով տանից՝ անհետանում է գիշերուայ մթութեան մէջ:

«Նորափեսան՝ չկամենալով, որ իր հարսը խաբւեբայ կամ ուխտադրութ գուրս գայ՝ վեհանձնաբար թոյլ տուեց նրան կատարելու իր երգումը:

«Իսկ սիրահար երիտասարդը, որի համար նորահարսը բերել էր հարսանիքի ամենասիրուն խնձորը, տեսնելով նրա անվեհեր հերոսութիւնը՝ զգացուած շնորհակալութիւն յայտնեց և առանց այլապայութեան յետ արձակեց:

«Գիշեր ժամանակ տուն վերադառնալիս՝ նորահարսն ընկնում է աւազակների ձեռքը: Աւազակները մնացել էին զարմացած և չէին հասկանում, թէ զա ի՞նչպէս է պատահել, որ երիտասարդ կինը գիշերուայ կէսին թանկագին շորերով ու զարդերով պճնուած՝ մենմենակ դուրս է

եկել տանից, բայց երբ լսեցին նրա պատմութիւնը, ներողութիւն խնդրեցին ու ազատ արձակեցին»:

Դատաւորն այս պատմութիւնը վերջացնելուց յետոյ դիմեց եղբայրներին և հարցրեց.

«Ասացէ՛ք տեսնեմ, ո՞վ աւելի ազնիւ ու վեհանձն վերաբերուեց այս աղջկան. նորափեսան արդեօք, սիրահար երիտասարդը, թէ՞ աւազակները»:

Եղբայրներից մէկը պատասխանեց.

«Դէպի այդ աղջիկը, իմ կարծիքով, ամենից վեհանձն ու մեծահոգի վերաբերմունք ցոյց տուեց իր նորապսակ ամուսինը, որ արգելք չդարձաւ և թոյլ տուեց նրան կատարելու իր վտանգաւոր խոստումը»:

Միջակ եղբայրն ասաց.

«Ինձ թւում է, թէ այդ աղջկայ հետ ամենից ազնիւ վարուեց սիրահար երիտասարդը, որը մատաղահաս հերոսունու անձնազոհ անվեհերութիւնը տեսնելով՝ այնպէս զգացուեց, որ առանց վիրաւորանք հասցնելու՝ վերադարձրեց նրան իր ամուսնու մօտ»:

Այստեղ կուսակալը միջամտեց.

«Եթէ իմ կարծիքը ձեզ համար գին ու արժէք ունենար, ես ձեզ կասէի, որ իմ համակրութիւնն ամենից աւելի հակուում է դէպի աւազակների կողմը. ամայի լեռներում, գիշեր ժամանակ նրանց ձեռքն է ընկնում մի նազանի կոյս,

հարուստ ու գեղանի, սակայն երբ նրանք լսում են աղջկայ սիրային սրտաշարժ պատմութիւնը, ազատ են թողնում»:

Փոքր եղբայրը, որ մինչև այդ անխօս լսում էր, յանկարծ վեր թռչելով տեղից՝ բացականչեց. «Իմ կարծիքով թէև ամենքն էլ անմիտ ու տխմար են վարուել աղջկայ հետ, բայց ամենից առաւել դատապարտելի և անհասկանալի է հէնց աւագակներին վարմունքը, որ մի կնոջ, որի վրայ գտնուած միայն գոհարների ու զանազան հաղուագիւտ քարերի գնով կարելի էր մի քանի բեռնաւորուած կարաւան առնել ու ծախել, նախապէս չկողոպտեցին ու այնպէս բաց չթողին»:

Կուսակալն իսկոյն վեր կացաւ տեղից և հրամայեց. «Բռնեցէք ձեր փոքր եղբօրը. ձեր հանգուցեալ հօր ոսկէ մատանին նրա մօտն է գտնւում»:

Նւ որքան արդար էր նրա դատաստանը:



ԼՍՏՈՒՆԴԱՄՈՐ ՆՁԵՆԵՂՐՈՒԹԻՒՆԸ

Երբ որ Մարիամը տաճարումն էր, նրա ծնողները մեռան, և ինքը բոլորովին որբ մնաց:

Նա տաճարում եղող իրեն հասակակից կոյսերի մէջ համարւում էր ամենապարկեշտը, աղօթքի մէջ ամենաշերմեռանդը, գործունեան և շնորհալին: Աստուածապաշտական խոհերով երբեմն նա այն աստիճան էր ոգևորւում, որ ժամերով առանձնանում էր տաճարի անկիւններից մինում և հեռու մարգկանց տեսողութիւնից երկար աղօթում էր ու լաց լինում:

Քահանաներն այդ բանը տեսնելով՝ զարմացմամբ մտածում էին, թէ մի գուցէ մատաղ կոյսի սիրտը յուզող ըստ երևոյթին բարեպաշտական վշտերը բոխելիս լինին մարմնական կրքերից, և բազմիցս խորհուրդ էին տալիս նրան ամուսնանալ:

Մարիամն ատելով ատում էր աշխարհային սին կեանքը և զրականապէս յայտնում էր, որ ինքն ուխտել է մինչև կեանքի վերջը կոյս մնալ ու ծառայել Աստուծուն:

Բայց հրէական օրէնքով ամենքն ամուսնացած պիտի լինէին, ուստի երբ տաճարում սպասաւորող կոյսերից շատերի ամուսնանալու համար սահմանուած տարիքը լրացաւ, քահանաներն առաջարկեցին նրանց իրենց համար ամուսիններ ընտրել:

Որոշուեցաւ ժամանակը:

Նշանակուած օրը փեսացուները փոխանակ իրենք անձամբ ներկայանալու, ընդունուած սովորութեան համեմատ, ծնողների և հաւատարմատարների միջոցով ներկայացրին ամեն մէկն իրենց պարագմունքի յատկանիշը կազմող գըլխաւոր գործիքները. օրինակ, դերձակը՝ իր մկրատը, վաճառականը՝ կշիռն ու չափը, սեղանաւորը՝ ոսկի դրամներ, կօշկակարը՝ հերիւնը, դարբինը՝ մուրճը, հիւսնը՝ ուրագը, երկրագործը՝ խոփը...

Գործիքները տաճարում երեք օր մնալուց յետոյ դուրս բերուեցին գաւիթ: Հարսնացու կոյսերը հերթով մօտենում էին, և իւրաքանչիւրը մի գործիք վերցնելով՝ հեռանում էր: Վերցրած գործիքն արդէն ինքն ըստ ինքեան ապացոյց էր, թէ ո՞ր աղջիկը ո՞ր տղին է իրեն փեսացու ընտրել. ուրիշ ձեւականութիւններ տեղի չէին ունենում:

Մարիամն ամենից վերջն էր մնացել. երբ նա աւամայ քայլերով առաջ եկաւ, մէջ տեղում ոչինչ չէր մնացել, բացի մի ուրագից:

— Երևի իմ վիճակն էլ այս է, — անայց Մարիամը և վեր առաւ ուրագը:

Ո՞վ էր այդ ուրագի տէրը:

Բանից երևաց, որ ուրագի տէրը մի ծերունի հիւսն էր Յովսէփ անունով, որ Մարիամի մօտ բարեկամն էր և յաճախ երթևեկում էր տաճար իր պարագմունքի վերաբերեալ գործերով և դէպի Մարիամը միշտ ծնողական խնամք ու գգուանք էր ցոյց տալիս:

Այդ օրից ի վեր Մարիամը թողեց տաճարը և գնաց Յովսէփի տունը, իսկ յայտնի է, որ Յովսէփը նշանածի անունով դարձաւ Աստուածամօր պատուի և կուսութեան պահապան հրեշտակը:

1006666



ՏԱՇՏ 'Ի ԿՈՆՏԱԿ...

Հներից լսած բան է:

Մեր մեծերը պատմում են, որ Իլիճա գիւղում Կիրակոս աղայի ժլատութիւնն առած էր դարձել. եթէ մէկը կամենար միւսին ժլատութեան մէջ կշտամբել կամ նրա ագահութիւնը չափել, սովորաբար ասում էր. «Կիրակոս աղայի նման սնդանը նայող կատուի աչքն ես հանում»:

Ոչ միայն հեռու տեղերից եկած աղքատները, այլ նոյնիսկ գիւղի որբերն ու անանկներն էլ երբէք նրանից ոչ մի օգնութիւն չէին ստացել:

Կիրակոս աղայի կատարեալ հակապատկերն էր ներկայացնում նրա մեծ որդու կինը—նորահարս Վարդուհին, որ գուռն եկած աղքատին դատարկածնոն յետ չէր դարձնում, ձեռքից եկած ողորմութիւնը ոչ ոքից չէր խնայում:

Մէկ անգամ, իրիկնադիմին, երբ Վարդուհին բարեկենդանի համար տաշտի մէջ գաթացու խմորն էր հունցում, նրանց տանը մօտեցաւ մի

հիւժուած ու մաշուած աղքատ և ողորմութիւն խնդրեց:

Աղքատի կոյր բախտից այդ միջոցին Կիրակոս աղան տանն էր. այրւում ու խորովւում էր Վարդուհու սիրտը. նա ցանկանում էր անպատճառ մի բանով օգնած լինել օտարականին, բայց ի՞նչ կարող էր անել. ինքը ձեռքի տակ ոչինչ չունէր, իսկ տանից էլ վերցնել մի որևէ բան և տալ աղքատին՝ նա չէր համարձակւում. ժլատ ծերունու ներկայութիւնը կաշկանդել էր նրան:

«Ողորմեցէք Աստուծու սիրուն համար, ողորմեցէք, հեռու տեղից եմ եկել, մերկ ու քաղցած մի տուն երեխաներ ունիմ թողած»:

Վարդուհին շատ դէս ու դէն նայելուց յետոյ, երբ Կիրակոս աղայի անբարեհաճ հայեացքը նկատեց, տեղն ու տեղը սառած մնաց. բայց զլխում յանկարծ մի երջանիկ միտք ծագեց, և նա ձեռքը հապճեպ դէպի տաշտի խմորը երկարացնելով՝ պատրաստուեց այն ամբողջապէս նետել աղքատի մաղախի մէջ: Կիրակոս աղայի սրտտես աչքերը նկատեցին այդ բանը, և նա կամենալով պատժել հարսի յանդգնութիւնը՝ մոլեգնաբար դռուց.

«Տաշտ 'ի կոնակ»... այսինքն մի տաշտ էլ խմորի երեսովը ծածկիր:

Բարեսիրտ հարսը մեծ տհաճութեամբ կատարեց սկեսրայրի անգութ հրամանը և մի ուրիշ

տաշտ վերցնելով՝ ծածկեց կաթնահունց խմորն ու զայրացած կանչեց.

«Տաշտ 'ի կոնակ, գնան»...

Եւ, ոհ հրաշք, մի ինչոր աներևոյթ զօրութեամբ խմորը կենդանացաւ և մի տաշտ փորատակին ուննալով՝ սկսեց դանդաղօրէն դէպի աղքատը շարժուել:

Աղքատն այդ անակնկալ հրաշքից զարհուրած՝ սկսեց փախչել, որքան ներում էին նրա թոյլ ոյժերը. պառաւ Կիրակոս աղան լեղապատառ տեղն ու տեղը մնաց չորացած. իսկ նորահարս Վարդուհին խոշոր աչքերը յառած այդ նորաստեղծ կենդանու վրայ՝ անընդհատ կրկնում էր.

«Տաշտ 'ի կոնակ, տաշտ 'ի կոնակ»...

Այդ կենդանին ժողովրդի մէջ մինչև օրս էլ տաշտ ի կոնակ է կոչւում, տեղ-տեղ էլ՝ կուրայ կամ կրիայ:



Ս Ա Տ Ա Ն Ա Ն

Եգիպտոսի անապատում Անտոն ճգնաւորի հետ միասին ապրում էր երիտասարդ Երանոսը: Սա լսելով զառամեալ Անտոնի հոգեկան սխրագործութիւնների հռչակը՝ բուռն ցանկութիւն զգաց իր մէջ նրան աշակերտելու:

Ուսուցիչն իր նորեկ աշակերտին շարունակ պատմում էր աշխարհային գայթակղութիւնների ու մեղքի մասին, ամեն կերպ աշխատում էր նրա մէջ զգուանք և ատելութիւն յարուցանել դէպի աշխարհային ուն ու վաղանցուկ փառքը և արհամարհանք՝ դէպի հարստութիւնը, մեծութիւնը, կեանքի վայելքները, այդ ամենը համարելով սատանայական որոգայթներ թշուառ մարդկութիւնը աւելի ևս թշուառացնելու համար: Նա յաճախ Սատանային նկարագրում էր այնպիսի սոսկալի գոյներով, որ խեղճ Երանոսի անձը սարսուռ էր պատում:

—Հայր Անտոն,—գիմեց մի անգամ Երանոսն իր ուսուցչին,—պատմիր ինձ տեսնեմ, ռոպիսի արտաքին ունի արդեօք Սատանան:

—Ո՛հ, որդեակ, նրա մարմնի արտաքինը սարսափելի է, գարշելի է. նրա կաշին, օրինակ, սև է ածուխի նման:

—Հա,—ընդհատեց ուսուցչին աշակերտը,— ուրեմն նա արտաքուստ նման է մեր սևամորթ նեգրերին. էհ, ի՞նչ վատ բան կայ այդտեղ. մեր խափշիկների կաշին էլ սև է, բայց երբ մօտիկ ծանօթանում ես նրանց հետ, տեսնում ես, որ նրանց սիրտն ու հոգին էլ մերի նման է:

—Նա ճակատի վրայ ունի մի զոյգ այծի. անձոռնի պոզեր:

—Պոզերը այծին շատ են սազում և երբեք անձոռնի չեն,—վրայ բերեց Երանոսը:

—Նրա պոչը վագրի պոչի նման երկար է ու դիւրաշարժ:

—Դա էլ է գեղեցիկ:

—Աչքերը ճրագի նման վառվռուն, ահեղի:

—Երևի այդ վառվռուն աչքերը լուսաւոր էլ կրլինեն:

Ուսուցչին դիւր չեկաւ աշակերտի թերահաւատ վերաբերմունքը և կամենալով նրան աւելի զօրաւոր փաստեր ցոյց տալ, նա ձեռքը երկարացրեց դէպի հին մագաղաթը, վերջրեց այն, բաց արաւ ու սկսեց Երանոսին ցոյց տալ Սատանայի պատ-

կերը զանազան կերպի ու զանազան ձևերով նկարած:

Սատանայի սև, տեղ-տեղ մազոտ կաշին, այծի պոզերը, վագրի պոչը, գայլի աչքերն ու ճիւղային ոտներն այնքան զարհուրելի էին ու աններգաշնակ, որ իրօք երիտասարդ Երանոսի սիրտը զզուանքով լցուեց դէպի Սատանան:

Մի գիշեր նա վախից երազ տեսաւ. մոյգ-կապոյտ երկնակամարի վրայ տեսաւ անթիւ, անհամար աստղեր, որոնք կարծես իրար հետ զրուցում էին ու իրար աւանջին տիեզերքի ու աշխարհի գաղտնիքը փսփսում:

Ահա այդ աստղերից մէկը շարժուեց իր տեղից և դէպի առաջ խաղաց. նա քանի մօտենում էր երկրին, զգալի կերպով մեծանում էր, և նկատելի էր, որ հետզհետէ մարդկային կերպարանք է ընդունում: Վերջապէս նա իջաւ Անտոն ճգնաւորի այրի դիմաց բուսնող ահագին արմաւենու վրայ: Այդ ահեղակերպ տեսիլն ապշեցրեց Երանոսին, և նա ահ ու դողով պատած՝ հարցրեց.

—Ասա ինձ, ո՞վ սոսկալի տեսիլ, դու ո՞վ ես:

Տեսիլը պատասխանեց.

—Սատանան եմ:

Երանոսը զարհուրած հարցրեց.

—Ի՞նչպէս թէ Սատանան ես. չէ՞ որ հայր

Անտոնը բեզ նկարագրում է ամենամուսկլ գոյնե-
րով. ասում է, որ ըստ կաշիի սև է ածուխի նման,
աչքերդ գեհենի կրակի նման դժոխային, դէմքդ
ահուելի և ըստ լույս տեսքը բաւական է արար-
աշխարհ հաւաքելու համար:

—Հայր Անտոնը բարի մարդ է, բայց մո-
լորուած է,—պատասխանեց տեսիլը ծառի վրայից:

—Ապա իմաստունները, մարգարէները և
վերջապէս բոլոր մարդիկ չէ՞ որ դարձեալ նոյնն
են պատմում, ինչ որ և հայր Անտոնը. դու
չար և կործանարար ոյժ ես...

—Մարդիկ, նոյնիսկ նրանցից ընտրեալներն
աշխարհիս երեսին դեկավարում են Անտոն
ճգնաւորի նման կոյր և մոլորուած առաջնորդ-
ների ձեռքով:

—Ինչո՞վ բացատրել մարդկանց այդպիսի
անարդար վերաբերմունքը դէպի բեզ,—հարցրեց
Նրանոսը:

—Նրանով,—վրայ բերեց արմաւենու վրայից
տեսիլը,—որ մարդն աշխարհի գոյութեան առաջին
օրից մինչև օրս միշտ թշնամի է եղել ինձ: Ես
ապրել եմ հեռու եթերում, ոգիների անսահման
աշխարհում և ոչ մի միջամտութիւն չունիմ մարդ-
կանց գործերի մէջ. ձեր Հրեշտակն էլ, ձեր Սա-
տանան էլ դուք էք. նրանք գոյութիւն ունեն
միայն ձեր սրտերում: Երբ մէկը մի բարի բան է
կատարում, սովորաբար ասում են. «Դա հրեշ-

տակների օգնութեամբ է եղել»։ Իսկ երբ մի չար
գործ է գործում, ասում են. «Դա Սատանան է
խաբել նրան»։ Այս երկու դէպքումն էլ մարդը
սուտ է խօսում. նա իրեն կամազուրկ յայտարա-
րելով և իր արարքների շարժառիթներն ինչոր
աներևոյթ ոգիների ազդեցութեանը վերագրելով՝
ինքն աշխատում է իրեն անպատասխանատու հա-
մարել իր կատարած չար և բարի գործերից:

—Բայց և այնպէս,—յամառ կերպով շարու-
նակեց Նրանոսը,—ինչո՞ւ մարդիկ այնքան զար-
հուրելի կերպով են պատկերացնում քեզ, քանի
որ դու փայլուն ես Արուսեակ աստղի նման և
լուսաւոր:

—Դա նրանիցն է, որ մէջ տեղ թշնամու-
թիւն կայ, իսկ ուր կիրք և ատելութիւն կայ,
այնտեղ բացակայում է սէրն ու արդարութիւնը:
Մագաղաթը, մելանը, վրձինը, լեզուն—այս ամենը
դտնւում են իմ թշնամիների ձեռքին, և նրանք
իմ պատկերը քաշում են և իմ մասին ճառում
այնպէս, ինչպէս իրենց հաճելի է. բայց, իհարկէ,
հակառակորդի, թշնամու կեղտազրութիւնն ու
բարբաջանքը դեռ ճշմարտութիւն չէ:

Տեսիլը յանկարծ չքացաւ, և Նրանոսը զարթնեց:

Անտոն ճգնաւորը՝ առաւօտեան վեր կենալով
աղօթքի՝ մենաստանում այլևս չգտաւ Նրանոսին.
սա կեանքի մէջ բռնել էր արդէն բոլորովին
ուրիշ ճանապարհ:

ՀԱՄԱՐԶՄԱՆ ԳԻՇԵՐԸ

Յիսուս վերջին անգամ անցնում էր Պաղեստինով, և սրպիսի հոգեյոյգ տպաւորութիւններ էին զարթեցնում նրա մէջ Սարոնի շուշանը, Թափորի ծաղիկները, կեդրոնի ձորակը, մարգարէների քաղաքը, Գալիլիական ծովը, Յորդանանի ափերը, անապատը...

Նա հրաժեշտի ողջոյն էր տալիս այդ ամենին և վերջին անգամ իր աստուծային ոտների տակ տրորում էր այն հողը, որի վրայ իրեն երբեմն «ովսանան» էր գոչում թեթևամիտ ամբոխը, երբեմն «ի խնչ հան, ի խնչ հան զգա», և որը վերջապէս նա ներկել էր իր արիւնով:

Յիսուս, որ այնքան սիրում էր բնութիւնը և յաճախ գիւղ ու քաղաք թողած՝ գիշերներն անց էր կացնում լեռների կատարներին, այգիներումն ու անապատում, իր համբարձման նախընթաց գիշերը եկել էր իր սիրած ու փայփայած ծառ ու ծաղիկներին վերջին «մնաս բարովն» ասելու:

Երբ լուսնկայ գիշերով Յիսուս շրջապայում

էր Հրէաստանը, խոս ու ծաղիկներ՝ ամենքը վեր կացան տեղերից և խոնարհ գլուխ տուին նրան: Յիսուս օրհնեց ամենին և նրանցից իւրաքանչիւրին առանձին-առանձին շնորհ ու զօրութիւն բաշխեց. նա մի քանիսին տուեց արտաքին չքեղ փարթամութիւն, մի քանիսին՝ եղեմական անուշահոտութիւն, մի քանիսին՝ առատ պաղաւթութիւն, մի քանիսին՝ բժշկական զօրութիւն, մի քանիսին էլ՝ թովչական դիւթող յատկութիւն...

Ամենքը գոհ մնալով Յիսուսի բաշխած պարգևներից՝ էլ աւելի բազմապատկեցին իրենց ստացած շնորհները, էլ աւելի խոնարհեցրին իրենց գլուխներն ու շնորհակալութիւն յայտնեցին աստուածային օրհներգութեամբ:

Միայն թութունի թութին էր, որ առաջուայ պէս անշարժ կանգնած էր իր տեղում՝ գլուխը դէպի վերև ցից արած. այս բանը դիւր չեկաւ Յիսուսին, և երբ նա զարմացած դիմեց թութունին, վերջինս պատասխանեց. «Տէր, ես ցաւած եմ քեզանից, որովհետև դու բոյսերից ոչ մէկին չմոռացար. ամենին մի առանձին շնորհ բաշխեցիր, միայն ինձ, թշուառիս, մոռացար և զրկեցիր քո աստուածային օրհներգից»:

Յիսուս պատասխանեց. «Լնկեր, բոլոր շնորհներն արդէն բաշխուած են. դու ուշացել ես. էլ ի՞նչ կարող եմ տալ քեզ: Բայց որովհետև դու քո Տիրոջ առաջին անհնազանդ գտնուեցար և

գլուխդ չխոնարհեցրիր, ուստի ես քո մէջ կը-
դնեմ մի այլ զօրութիւն, որը մինչև օրս անյայտ
էր աշխարհին: Դու արտաքուստ կունենաս դիւ-
րեկան, անմեղ, զուարճալի բնոյթ, իսկ նեքքուստ՝
կործանիչ, քայքայող ու աւերիչ: Դու կը դառնաս
մարդկանց սիրելին, թէ՛ ռամկի և թէ՛ իշխանի
համար. գիշեր-ցերեկ դու մարդուց անբաժան
կըլինես և վաղ առաւօտեանից մինչև ուշ գիշեր
նրա բերանի զարդը կըլինես. կը գտնուեն
նոյնիսկ այն աստիճան խելագար մարդիկ, որոնք
քրենց կիսամերկ, քաղցած երեխաների բերանից
չոր հացի պատառը կը կտրեն և թութունի կը տան.
Նրանք կը կոտորեն դրախտանման այգիները, ցո-
րենի, գարու ու բամբակի արտերի արտերը կը-
փշացնեն ու նրանց տեղ թութուն կը ցանեն:
Սակայն դո՛ւ, թութուն, որպէս ամենագորեղ թոյն՝
կը քայքայես մարդկանց թոքերը, ուղեղը, նեար-
դերը. նրանք քեզ աստուծային պատիւ ու յարգանք
կը մատուցանեն, բայց դու ոչոքի համար շահեկան
չես լինիլ, ոչոքի չես երջանկացնիլ. դու կը քայ-
քայես մարդկային ազգի առողջ կազմուածքը,
կը բթացնես նրա ուղեղը, կը սպանես նրա խիղճը,
սակայն քո երկրպագուների թիւը լեզէոնների կը-
հասնի: Դա դեռ բաւական չէ. դու կ'ուռածաղիկ
կը դառնաս ընտանիքի մէջ. դու մարդուն իր
կնոջից կը բաժանես, հօրը՝ որդուց, քրոջը՝ եղբօ-
րից: Եւ արեան ու դառն քրտինքի ծանրագին

զնով ձեռք բերած թշուառ կոպէկները, որոնցով
պիտի հոգացուէին աղքատ ու սոված մարդկանց
հանապազօրեայ կարիքները, դու ծուխ ու մուխ
կը դարձնես:

«Մարդիկ կատեն քեզ, կանարգեն, սակայն
քո գլխին անէծք ու նզովք տեղալով հանդերձ՝
կուրօրէն կը շարունակեն պաշտօն մատուցանել
քեզ»:

Խոժոռեց իր դառն դէմքը թութունը, բայց
դարձեալ չխոնարհեցրեց ամբարտաւան, գոռոզ
գլուխը և մինչև օրս էլ մնաց նոյն դրութեան մէջ:



ԱՂՔԱՏ ՔԱՐՏԱՆՈՐ

Գալիլիայից դէպի Հրէաստան տանող ճանապարհի վրայ գտնուող մի փոքրիկ քաղաքում ապրում էր մի աղքատ բարտաշ. նա օրական հինգ ստակ էր վաստակում, որոնցից երեքը վեր էր առնում իր ընտանիքի կարիքները հոգալու համար, իսկ մնացած երկուսը բաժանում էր աղքատներին:

Մի անգամ Քրիստոս Մօր և աշակերտների հետ շրջագայելիս պատահեցաւ նրան և ողորմութիւն խնդրեց. բարտաշն առատ ողորմութիւն տուեց—իր ամբողջ օրավարձը:

Աստուածամայրը զարմացաւ այդ հազուագիւտ գթասրտութեան վրայ և խնդրեց Որդուն անտես չթողնել ողորմած ծերունուն:

Որդին լսեց Մօր խնդրիքը և օրհնեց բարտաշի աշխատանքը:

Հետեւեալ առաւօտը, երբ բարտաշը սովորական ժամին իր գործին գնաց, զարմացմամբ նկատեց, որ իր շինած գերեզմանաքարերից մի

քանիսը ոսկի են դարձել. նա փառք տուեց Աստուծուն և ապա քարերից մինը տուն բերելով՝ միւսները թաղեց հողի մէջ սև օրուայ համար:

Փոքր ժամանակից յետոյ նա վաճառեց ոսկու բեկորներից մինը մեծ գնով և հոյակապ ապարանք կանգնեցրեց. այնուհետև նա ապրում էր որպէս հարուստ մեծատուն և շատ քիչ էր հետաքրքրւում այն ամենով, ինչ չէր վերաբերում իր անձնական շահերին և կամ կատարւում էր իր ընդարձակ դաստակերտի չորս պատերից դուրս: Եւ այսպէս ժամանակի ընթացքում ոսկու և ձրիակեր անբովանդակ կեանքի ազդեցութեան ներքոյ քարացաւ նրա սիրտը, խիղճը բթացաւ իսպառ:

Բաւական միջոց անցնելուց յետոյ, երբ Յիսուս Հրէաստանից Գալիլիա էր վերադառնում, դարձեալ պիտի անցնէր քարտաշի մօտով. մտաբերեց նրա առատածնունդ ողորմութիւնը և փորձելու համար մօտեցաւ ողբալի ձայնով ողորմութիւն խնդրեց:

Մեծատունը բեհեզ ու ծիրանի հազած՝ հպարտ-հպարտ ճեմում էր իր սան սիւնազարդ ճեմելիքում և բարձրաձայն պատուէրներ էր տալիս իր առաջին ստրկաբար գլուխ խոնարհած ծառաներին ու սպասաւորներին մօտ ապագայում կատարելիք հսկայական խնճոյքի մասին,

որով նա յոյս ունէր ապշեցնել հրաւիրեալ մեծամեծներին ու երկրի իշխանաւորներին:

Անվատահօրէն ձեռքը պարզելով՝ Յիսուս աղաղակեց.

— Ողորմեցէք, պարոն, երկար ճանապարհից եմ գալիս, քաղցած եմ, ուտելու ոչինչ չունիմ:

— Դուրս վռնդեցէք այդ յանգուգն սրիկային, — գոռաց մեծատունը ծառաների վրայ. — Իմ տունը չէ նրա պէսների տեղը. էլ մեզանում ճար չմնաց. աղքատին տո՛ւր, ճանապարհորդին տո՛ւր, այրուն ու որբին տո՛ւր, դատարկապորտ թափառաշրջիկներին տո՛ւր. էլ Դ՞ր մինն ասեմ, էլ Դ՞ր մինը թուեմ. սրանց ձեռքից մեզ պրծում չկայ. այսօր տո՛ւր, վաղը տո՛ւր, էլ երբ է վերջ լինելու:

Յիսուս վշտացած սրտով հեռացաւ մեծատան մօտից. նա բարձրացաւ հանդիսակաց բլրի գագաթը և դիտում էր:

Ահա մեծատան ագարակում, ըստ երևոյթին անյայտ պատճառից, հրդեհ սկսուեց: Սռաջ բռնկուեցին խոտի դէղերը և ցորենի մեծաքանակ խուրձերը: Կրակը հանգցնելն անկարելի եղաւ. նա սոսկալի թափով կալերից անցաւ դէպի շտեմարանները, մթերանոցները և չորս կողմից ահեղի օղակներով շրջապատեց քարաշէն հոյակապ ապարանքը: Հրեղէն լեզուներն անխնայ լափում էին ամեն ինչ. փրկութիւն այլևս չկար:

Մեծատունը հազիւ մի կերպ ճողոպրելով անխուսափելի մահից՝ լեղապատառ վազ տուեց դէպի թաղած ոսկու բեկորները. բայց նրանք էլ քար էին դարձել, կրկին իրենց նախնական դրութիւնն ստացել:

Եւ միայն երկար ժամանակ անցնելուց յետոյ քարտաշն ընտելացաւ, հաշտուեց կատարած դառն իրողութեան հետ և վերցնելով մուրճն ու քարուրագը՝ վերսկսեց իր սովորական աշխատանքը և ողորմութեանց բաշխում:

Յիսուս, որ երբէք յարմար առիթը բաց չէր թողնում կեանքի այլևայլ պատահարներից բարոյական խրատներ արծարծել և ուսուցանել շրջապատողներին՝ աշակերտներին դիմելով ասաց.

— Ինչո՞ւ այդչափ դժուարին է հարուստների համար երկնքի արքայութեան ճանապարհը. ճշմարիտն եմ ասում ձեզ, որ աւելի դիւրին է մալոխին ասեղի ծակովն անցնել, քան մեծատան արքայութիւն մտնել:



ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Աղուէսը գայլից նեղանալու պատճառներ շատ ունէր. չգիտէք, որ երբ մի զօրեղ ու անզօր իրար հարեան են լինում, հարուածը, վիրաւորանքը, փառն առաջնի կողմից միշտ անպակաս է լինում երկրորդին:

Աղուէսը համբերեց, երկար համբերեց. տրկարի միակ զէնքը համբերութիւնն է և այն յոյսը՝ թէ մի օր էլ իր ճակատին արեւ կը ճառագայթէ:

Սակայն այդ արեւը երկար չէր ժպտում աղուէսին, և նա մտածեց գայլի դէմ խորամանկութեամբ գործել:

Մի օր, առաւօտեան, աղուէսը սովորակաւից վաղ դուրս եկաւ տնից և իրեն սաստիկ ուրախ էր ձեւացնում. թե ունենար կըթռչէր:

— Հը՛, ինչ է պատահել, աղուէս քուրիկ. ինչպէս երևում է, տրամադրութիւնդ տեղն է. էլի ո՞վ գիտէ որտեղից ինչ բարի համբաւ ունիս:

— Այո՛, այո՛, ինչպէս չուրախանամ, գայլ եղբայր. ասում են՝ աղատութիւն է տուած աշ-

խարհին. աչքալուսանքի մեծը քեզ է հասնում. դու այսուհետեւ կարող ես ոչխարների հետ միասին ազատ ապրել:

— Աստուծու աչքալուսանքն էլ քեզ հասնի, քուրիկ ջան, իրաւ որ դրանից էլ մեծ ուրախութիւն չի լինիլ. մեր իրաւունքը մեր ձեռքն են տալիս, էլ ի՞նչ է պակաս:

— Իրաւունքը՝ իրաւունք, — վրայ բերեց աղուէսը, — բայց այդ իրաւունքից օգտուելու արհեստին էլ վարժ պէտք է լինել:

— Չէ, սանամար աղուէս, — յանկարծ միտքը փոխեց գայլը, — չէ՛, այս աշխարհում այնքան թերհաւատ եմ դարձել, որ մինչև ձեռքովս չըշափեմ և աչքովս չտեսնեմ՝ չեմ հաւատալ:

— Չհաւատալու բան չկայ, գայլ բարեկամ. թագաւորի հրամանն ամեն տեղ գրուած է, ամմենքը կարգացել են, նոյն իսկ քանի տեղ մարդիկ, ասում են, ուրախութիւնից իրար արիւն թափել են:

— Այդ ամենը շատ ախորժելի է ու գեղեցիկ, սակայն մէջտեղում փաստաթուղթ է հարկաւոր, որ էզուցուայ օրը, պատասխանատուութեան դէպքում, մէջ տեղ գիր ու կիրակոս լինի:

Աղուէսն, առանց երկար սպասեցնել տալու, հանեց գրպանից թաշկինակը և խորախորհուրդ հայեացքով յանձնեց գայլին:

Գայլը, որպէս գաղտնահրաշ թալիսման,

Թաշկինակը սեղմեց կրծքին և աղուէսին շտապ հրաժեշտ տալով հեռացաւ դէպի դաշտը:

Շտապում էր գայլը, որովհետեւ նրա առաջին արիւննոտ գործունէութեան մեծ ասպարէզ էր բացւում:

Եւ մտաւ գայլը, ազատութեան աւետաբերը ձեռքին բռնած, ոչխարների հօտը և առանց երկար ու բարակ մտածելու սկսեց աջ ու ձախ հնձել ոչխարներին. մէկի դմակը պոկեց, միւսի կոկորդից բռնեց, երրորդի կաշին պատառեց, և այսպէս անվերջ:

Հովիւներն ազատութիւն խօսքից գլուխները կորցրին և սկզբում մի փոքր անակնկալի բռնւեցին. բայց երբ տեսան, չէ՛, գայլն ազատութիւն ասուած բանը միայն իր օգտին է հասկացել և ուրիշի ոչ միայն ազատութեան վրայ է բռնանում, այլ և շահերին, կեանքից զրկում իր արիւննոտ, այլ և շահերին, կեանքից զրկում իր արիւննոտ ճաշակին յագուրդ տալու համար, նոր միայն խելքի եկած՝ սկսեցին միջոցների դիմել:

Հաւաքուեցին հովիւները, երկար ու բարակ մտածեցին, խորհուրդ կազմեցին, թէ ինչպէս անեն, ինչ միջոցի դիմեն, որ համ իրենք ազատուեն գայլի ատամներից, համ էլ իրենց հօտերին ազատեն: Մտածեցին և որոշեցին, որ գայլին հօտի միջից արտաքսելու համար հարկաւոր է ընկերական միահամուռ գործունէութիւն:

Եւ վրայ տուին հովիւները. շներն էլ նրանց

ետեից: Գայլը դժուարին տեղ բռնուեց. նախ աղաչանքի դիմեց, ապա խորամանկութեամբ ուղեց ազատել իր անձը, բայց տեսնելով որ ոչ մի բան չի օգնում, սկսեց փախչել: Նա գուխը կորցրած փախչում էր ու փախչում հովիւների ձեռքից: Մին էլ յանկարծ աչքերը վերև բարձրացրեց գայլը և ծառի վրայ կկգած տեսաւ աղուէսին: Գայլն արդէն ուժասպառ արիւնաքամ էր լինում մահակների հարուածների տակ. նա հազիւ հազ շունչ էր բաշում, իսկ աղուէսը իր հրճուանքի զագաթնակէտին հասած ուրախ-ուրախ քրքում էր:

— Ի՞նչ անեմ, խորամանկ բուրիկ, — յուսա. հատ վայնասունով խռիւռաց գայլը, — ինձ մի ճար ու ճանապարհ ցոյց տուր, թէ չէ՛՝ այս անգութ հովիւներն արդէն հոգւոցս են կարգում:

— Թ՛ո՛ղ թը, թո՛ղ թը ցոյց տուր, — ծառի վրայից բղաւում է աղուէսն ու շարունակում է քրքաւ. իսկ նրա ոտների ներքոյ հովիւների միահամուռ հարուածների տակ արդէն իր վերջին շունչն էր փչում ազատութեան անունով իր դունչն ուրիշի արեան մէջ թաթախող գիշատիչ զագանը:

Ազատութիւնն՝ ազատներին.

Շղթաները՝ զագաններին:



ՈՐՔԱՆ ՀՈՂ Է ՀԱՐԿԱԾՈՐ ՄԱՐԳՈՒՆ

Ի սկզբանէ Աստուած մարդու ճակատագիրը կապեց հողի հետ:

Մարդն ստեղծուած է հողից. մեռնելուց յետոյ կրկին հող պիտի դառնայ:

Բացի այս, մարդու կերակուրը՝ բանջարեղէն թէ ընդեղէն, սնկեղէն թէ մրգեղէն—դուրս է գալիս հողից:

Ուրեմն մարդը ծնւում է հողից, սնունդ է առնում հողից, մեռնում է հող դառնալու համար:

Պարզ է ուրեմն, որ աշխարհի երեսին մարդու համար հողից աւելի պիտանի բան չկայ:

Օգը և ջուրը մարդը միշտ ներկայացրել է հողից անբաժան. նրանք առանձին մարմիններ չեն կազմում, այլ հողի լրացուցիչ մասերն են:

Արդ՝ ի՞նչը կարող է մարդու համար աւելի թանկագին լինել, քան հողը:

Ի հարկէ ոնչինչ:

Այս պատճառով էլ, երբ Աստուած Ադամին դուրս արեց դրախտից, ուր նա ծոյլ ու անգործ

կեանք էր վարում, և կամեցաւ աշխատանքի ընտելացնել նրան, հրամայեց, որ իրեն համար պարապմունք ընտրէ:

Ադամն ընտրեց երկրագործութիւնը:

Երկրագործութեան համար ամենից առաջ և ամենից առաւել հող է հարկաւոր. այս պատճառով էլ Աստուած Ադամին հրամայեց, որ նա իր համար հողաբաժին վերցնէ:

Ադամը համաձայնուեց. վաղ առաւօտեան արշալոյսը բացուելուն պէս, նա լծեց զոյգ եղները, բռնեց արօրի մաճը և Աստուծու անունը տալով՝ հօ արաւ եգներին:

Նա ուզեցաւ իր ագարակի շուրջն ափօս քաշել, որ ապագայում նրա ձեռքից առնող չլինի, վէճ ու խօսակցութիւն անող չլինի: Ադամը քշեց արօրը. գնաց, գնաց, մինչև կէսօր գնաց. կէսօրին մօտ շոգը սաստկացաւ. ինքն էլ դադրեց, եգներն էլ. ուզեցաւ մի փոքր հանգստանալ, բաց թողեց եգները լծից, քշեց առուակի մօտ, ուր ջուր խմեն, համ էլ կանաչ խոտումն արածեն. ինքն էլ սառը ջուրը խմեց, հացը կերաւ, պառկեց քնելու: Էտինքուայ դէմ զարթնեց քնից, պաղ աղբիւրի ջրով երեսը լուաց, թարմացաւ, ոյժերը կազդուրեց, լծեց արօրը և առաջ քշեց, դարձեալ գնաց, մինչև երեկոյեան մթնաշողը ընկնելը գնաց...

Վրայ հասաւ գիշերը:

Գիշերը վտանգաւոր ժամանակ է, մանաւանդ որ տեղը լեռնային էր և լի ամեն տեսակ գազաններով. ապահովութեան համար եգները կապեց ծառին, ինքն էլ կոսպալը ձեռին բարձրացաւ ծառը քնելու, համ էլ եգներին այնտեղից մտիկ տալու:

Մեծ ահ ու դողով անցկացրեց Ադամը գիշերը. քանի անգամ եգներն սկսեցին բառաչել, քանի անգամ ինքը քնած տեղից վեր թռչելով՝ հայ-հարայ կանչեց, գազաններին փախցրեց ու դարձեալ պառկեց քնելու, ու դարձեալ զարթնեց:

Վերջապէս Աստուծոյ բարի լոյսը ծագեց: Ադամը ցած իջաւ ծառից, լծեց եգներն ու առաջ գնաց:

Նա գնաց մի օր, մի շաբաթ, մի ամիս, մի տարի... անթիւ զրկանքներ կրեց, մի տեղ գազանները յարձակուեցին նրա վրայ, մի տեղ անմատչելի ճահիճների ու ապառաժների հանդիպեց. անշուր անապատում քաղցած ու ծարաւ մնաց. եգներն ուժասպառ, աշխատանքից նիհարացած՝ կմախք դարձան:

Սակայն ոչ մի արգելք չէր կարող վհատեցնել Ադամին, ջլատել նրա ոյժերը. թէև հետը հետէ դանդաղ, բայց շարունակ դէպի առաջ էր գնում և յետևից թողնում էր իր ապագայ տիրապետութեան սև գիծը՝ ակօսը...

Վերջապէս Աստուած անտարբեր դիտելուց

յոգնեց և վճռեց վերջ տալ Ադամի հողակուլ արշաւանքներին:

Նա Գարրիէլ հրեշտակապետին ուղարկեց Ադամի մօտ, երբ վերջինս անթիւ զրկանք ու նեղութիւն կրելուց յետոյ լեռներից նոր էր ցած իջել դաշտերը և ներքին հաճութեամբ աջ ձեռքը կիսաշրջանաձև յօնքերի վրայ դրած՝ նայում էր և չէր կշտանում. այնքան ընդարձակ ու գեղեցիկ էր գարնան բազմերանգ զարդերով պնտուած դաշտը:

Գարրիէլ հրեշտակապետն ասաց նրան. «Ադամ, աշխարհիս չորս կողմին միայն Աստուած կարող է տիրանալ, և դու այսուհետև իրաւունք չունիս և ոչ մի քայլ առաջ գնալու»:

Ադամը զիջելու տրամադրութիւն ամենևին ցոյց չէր տալիս:

Վերջապէս նրանք երկար վիճելուց, իրար օձիք բաժըջելուց յետոյ որոշեցին՝ իրենց կանգնած տեղում մի քար տնկել որպէս սահմանագիւղ:

Ադամն սկզբում համաձայնուեց, բայց յանկարծ ինչ մտածեց, ինչ չմտածեց, իր խօսքը դրժեց և մաճը բռնած քաշեց խարազանն ու հօ արաւ եգներին դէպի առաջ:

Այստեղ Գարրիէլն այլևս չհամբերեց, քաշեց արօրը և դուրս շարտեց ակօսից:

Ադամը տաքացած, կրակ կտրած վրայ վա-

գեց. երկուսը փաթաթուեցին իրար, և մենամարտն սկսուեց. երկար կռուեցին փոփոխակի յաջողութեամբ, բայց վերջ ի վերջոյ Գաբրիէլը յաղթեց Ադամին և մէջքի վրայ վայր ձգեց նրան այն քարի մօտ, որից դէնը գնալու նա իրաւունք չունէր:

Բայց Ադամը—սիրեմ գրեզ—մէջքի վրայ ընկած ժամանակը շուռ եկաւ կոնակի վրայ դէս ու դէն և մի ուժգին աքացի տալով սահմանաքարին՝ հինգ կանգուն նրան դէպի առաջ գլորեց և ընկած տեղիցն իսկոյն վեր ցատկելով՝ ձեռքը դէպի առաջ մեկնեց, դէպի դաշտի հեռաւորութիւնը և ոգևորութեամբ աղաղակեց.

«Դէ-հա իմ սահմանը»:

Գաբրիէլի ծիծաղը բռնեց այդ տեսարանի վրայ:

Աստուած վերևից պատասխանեց.

«Այլևս թող ոչոք իրաւունք չունենայ արօրի առաջ սահման դնելու. ես ամբողջ երկիրը տալիս եմ Ադամին մշակելու»:

Ադամը, փոխանակ շնորակալութեան, գլուխը դէպի երկինք բարձրացրեց և դժգոհութեամբ տրտնջաց.

«Տէր, հէնց միայն այդքանը»...



ՍՈՂՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋԸՏՆԵՐԻ ԺԵՂՈՒՄԸ

Եւան երիտասարդ էր, գեղեցիկ ու խանդավառ. նրա կրծքի տակ թագնուած էր կրակոտ յոյզերի ու կրքերի մի անսպառ աղբիւր, որը մի ինչ-որ անորոշ կեանքի քաղցրութեամբ արբեցնում էր նրա սիրտը, միտքը, զգացմունքները:

Եւան երիտասարդ էր, և մեղքը, գայթակղութիւնը ստուերի նման ամենուրեք հետևում էր նրան. նա չէր կարող չմեղանչել, և մեղանչեց:

Եւան իր պատուիրանազանցութեան համար կրեց իր արժանի պատիժը:

Նախախնամութիւնը տուեց նրան կանանց պատիժներից ամենասոսկալին. մի առաւօտ նա վեր կացաւ քնից և սարսափով նկատեց, որ ինքը կորցրել է իր մարմնի չնաշխարհիկ գեղը, հրաշալի գրաւչութիւնը, նազելի ճկունութիւնը և աչքերի երկնային փայլը:

Այս բանն առաջացել էր նրանից, որ Աստուած ժողովել և եւայի մարմնի մէջն էր ամփոփել այն բոլոր կանացի մեղքերը, որոնք ապագայում

պիտի գործուէին կանանց ձեռքով և կանանց շուրջը:

Եւան, երբ նկատեց իր չքնաղ մարմնի այսպիսի անճոռնի այլանդակութիւնը, յուսահատ ճիշով վազ տուեց դէպի անդունդի բերանը, որ իրեն վայր ձգէ այնտեղից, բայց մի աներևոյթ զօրեղ ձեռք պահեց նրան. դա՛ Ադամն էր:

— Եւան, խնայիր մեր սէրը և այն պտուղը, որ կրում ես քո մէջ. դու ինձ համար գեղեցիկ ես և այդ գրութեամբ, որովհետև դու պատրաստուում ես մայր լինել:

Եւ առաւօտը արևելեան մեծ ծովի միջից ծիրանի և նարինջի լաթերով պճնուած արևն իր առաջին ճառագայթներով ընկաւ հէնց այս պատկերի վրայ. — մանկամարդ կինը վառուող այտերով ու բորբոքուած կատաղի աչքերով, հերարձակ դէպի անդունդն է նետուում, իսկ ուժեղ տղամարդը իր զօրաւոր բաղուններով գրկած նրա բարակ իրանը՝ յետ է քաշում անդնդի բերանից:

Արարչի գութը այս սրտաշարժ վեհ պատկերի առաջ մեղմացաւ, և Նա կամեցաւ մեղմացնել Եւայի պատիժը:

Գարնանային մի հրաշալի առաւօտ, երբ Եւան խոր քնից զարթնեց և տեսաւ, որ ինքն իր առաջուայ պատկերն ու գեղեցկութիւնն է ստացել, շատ ուրախացաւ և սկսեց փառք տալ Աստուծուն:

Իսկ ի՞նչ եղան այն մեղքերը, որոնք այլանդակել ու անճոռնիացրել էին Եւայի մարմինը: Աստուած նրանց դուրս բերեց այնտեղից և որպէս զի այդ մեղքերն անմարմին մնալով՝ յանկարծ այս կամ այն մարդու մէջ նորից չմտնեն, նրանց շօշափելի մարմիններ տուեց և նրանցից ստեղծագործեց այլ և այլ տեսակի սողուններ ու զեռուններ, օձեր, գորտեր, խլուրդներ, որդներ, միջատներ, կարիճներ, մոծակներ, ճանձեր...

Ահա այսպէս աշխարհիս երեսին ծնունդ առան միջատներն ու սողունները:



ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Երկարատև ցուրտ ձմեռուանից յետոյ արեգակը նոր էր սկսել մարդկանց ոտն ու ձեռք տաքացնել, որ շունն ու կատուն դուրս եկան զբօսանքի:

Այլրիւ ամիսն էր. մանուշակը վաղուց էր բացուել ու անցնելու վրայ էր. իսկ կանաչ խոտ որքան կուգես, սար ու ձոր լիքն էր:

Շունն ու կատուն, որ ամբողջ ձմեռը պարապ տանն էին նստել, շուտով յոգնեցան ու նըստան դէսից ու դէնից զրոյց անելու, ժամանակ անցկացնելու:

Պատկերը գրաւիչ էր. խնձորենին, որի տակ կանաչի վրայ նրանք նստել էին, արդէն ծաղկել էր. ներքեւում կարկաչում էր թէև պղտոր, բայց կայտառ վտակը:

Խօսք ու զրոյց բացուեց շան ու կատուի տանտէրերի մասին:

— Ես իմ վիճակից շատ ու շատ դժգոհ եմ,
— խօսել սկսեց կատուն. — ոչ օր ունիմ, ոչ գիշեր.

ուր դնում ես, որ կողմը շարժւում, պառաւի աչքերը յետևիցդ ման են գալիս. ամառուայ շոգին ծարաւ ես, ուզում ես անուշ կաթով սիրտդ մի փոքր հովացնել և մօտենում ես կաթի տաշտին, յանկարծ մառանատունն է մտնում պառաւ տանտիկինը և շերեփը տալիս է ճակատիդ. դուրս ես փախչում ազատուելու, ընկնում ես չարաճճի երեխաների ճանկը: Չէ, շուն եղբայր, բանս բուրդ է, դրութիւնս անտանելի, էլ ոչ կերածս եմ իմանում և ոչ էլ խմածս:

— Կատուն այս գանգատը սրտի այնպիսի դառն կսկիծով արտասանեց, որ վերջն էլ լաց եղաւ:

Սակայն շունը, որ այդ միջոցին ամենեկին արտասուելու տրամադրութիւն չուներ՝ հարցրեց.

— Քուրիկ Փիսիկ, ինչո՞ւ ես գանգատւում ուրիշներից, քանի որ դու ինքդ գողութիւն ես անում. ուզո՞ւմ ես չթափուել, մի լպստիր, քո գործովդ պարապիր, մուկ բռնիր:

Կատուն զարմացած նայեց շան երեսին և արտասուախառն մլաւեց.

— Հա, բարեկամ, գուցէ տեղդ տաք ես գտել, մեծ-մեծ ես բլրում, մին չեմ հարցնում, թէ ես ինչ հալուսն եմ. ազատ շունչ քաշելու, աչք բաց անելու ժամանակ չեն տալիս. տանը մէկ չէ, երկուս չէ, հարիւրաւոր հետևող աչքեր կան. ոչ կաթի կարող ես մօտենալ, ոչ էլ նոր խնո-

ցուց դուրս եկած թարմ կարագի համը ճաշակել-
մեր տունը մեղուների փեթակի է նման. ամենքը
գործում են, վազում, գիշեր-ցերեկ քուն ու դա-
դար չունին. էլ ռոտեղից մենք՝ խեղճ կատուներս
կարող ենք ապրուստի մասին հոգալ, բաւականու-
թիւնների մասին մտածել:

Շունը, կամենալով կատուի այրուած սրտին
մի կաթիլ սառը ջուր ածել, գուրգուրանքով
փնփնթաց:

— Փիսօ ջան, որ դու հիմա պատմեցիր քո
տանտիրոջ մասին, հիանալի է. երանի թէ ամենքն
էլ քեզ պէս բաղդաւոր ապրեն. կեր, խմիր, քէֆ
արա. միայն թէ գողութիւն մի անիր, աղնու-
թիւն սովորիր...

— Ուրեմն, Շնկօ եղբայր, քո վիճակն իմից
աւելի է վատթար:

— Ոչ, Փիսօ ջան, վատթար չէ, բայց ես
զարմանում եմ քո գանգատների անմտութեան
վրայ:

— Ի՞նչպէս թէ, — զարմացաւ կատուն. — ապա
դու ռապիսի տանտէր կը ցանկանայիր ունենալ:

— Ե՛ս, — պատասխանեց շունը. — ես կը կա-
մենայի, որ իմ տանտէրը գիւղի մէջ առաջին մարդը
լինէր, որ գիւղամիջով անցնելիս ամենքը իսկոյն
ոտի կանգնէին և խոնարհ գլուխ տային նրան. ես
կուզենայի իմ տիրոջ արտերն ու այգիները միշտ
կանաչ տեսնել, ամբարները լիքը ցորեն-գարիով,

կարասները՝ ճերմակ ու կարմիր գինով, կճուճները՝
մեղր ու կարագով: Ես կը տենչայի, որ իմ տէրը
տասնեակու կտրիճ տղայ ունենար, մի այդքան
էլ վարդ ու զարդ աղջիկ, գեղեցիկ հարսներ, որ
նրա թոռներն այնքան լինէին, որքան ահա մեր
չորս կողմը փռած մանուշակները և կամ այս
խնձորենու ծաղիկները, որ նրանք օրնիբուն գոր-
ծէին, խնդային ու ճչային. և եթէ նրանցից ամեն
մէկը իմ առաջին մի կտոր հաց գցէր, ես կուշտ
կըլինէի բոլորովին և գոհ:

— Շնկօ, — այս անգամ զսպուած հեգնեց կա-
տուն, — տեսնում եմ, որ խորամանկ մարդը կարո-
ղացել է քո էլ պոռչներիդ իւր քսել, աչքդ շլաց-
նել. շատ ոգևորուած ես խօսում, բայց մարդու
համար ամեն բան ժամանակաւոր գնահատութիւն
ունի. այսօր երեսիդ կը ժպտան, վաղը դուրս կանեն
տնից. որքան կարող ես յափշտակիր, կեր,
գողացիր...

Շունը բարկացաւ. — Հա, ուրեմն քո ասածն
ի՞նչ է, գող Փիսօ:

— Իմ ասածն այն է, դատարկահաչ շուն,
որ իմ տանտէրը լինէր մի քոռ պառաւ կնիկ, որ
կաթը երբեք չծածկէր, մածնի ու կարագի երեսը
միշտ բաց մնար, որ այնտեղ միայն ես թագաւորէի,
որ աջ գնայի՝ իւր լպստէի, ձախ գնայի՝ մեղր
լիզէի. ուտէի, խմէի, ջարդէի, ամեն բան փչաց-
նէի ու աւերակների մէջ իմ միայուն կանչէի...

Շան համբերութիւնը կտրուեց. նա կատաղած վրայ վազեց.— Գո՛ղ, աւագանկ, եթէ քո տանտիրուհին մի քոռ պառաւ լինէր, ապա այն ժամանակ նա ռրտեղից մեղը ու կարագ կունենար, որ դու լեզուդ նրա մէջ թաթխէիր:

Կատուն լեղապատառ թռչելով խնձորենու գլուխը՝ այնտեղից փրշշացրեց.

—Մի քոռ պառաւ կնիկ...

Շունը ծառի տակից անեղ ատամների միջից մոմոաց.

—Տասնեակու հատ կտրիճ...

Ծառի վրայից—Փը՛շշ-Փը՛շշ. ծառի տակից —համ-համ....

—Փը՛շշ...

—Համ-համ...

—Փը՛շշ...



ԱՐՏԱՍՈՒՔԻ ԱՒԱԶԱՆԸ

Հեռաւոր երկիրներէ, անծանօթ ծովերի ետքեւում ապրում էր մի թագաւոր Ռագմ անունով, որի մասին շատ քիչ բան գիտէին աշխարհի միւս թագաւորները. նոյնիսկ բանաստեղծներն ու իմաստունները միայն այնքան էին լսել, որ նա անբաւ հարստութեան տէր է, մեծահոգի է, բարեսիրտ ու ողորմած:

Նրա թագաւորութեան սահմանն անեզր ծովն էր. զօրքերին համար ու հաշիւ չկար. բերդերն ամուր պարսպապատ. ժողովուրդն արուեստագէտ, բարեկեցիկ:

Բաղդաւոր ու երջանիկ էր Ռագմ թագաւորը. բայց աւելի երջանիկ ու բաղդաւոր էր զգում իրեն նրա ժողովուրդը, որը վաղուց էր, որ չբգիտէր, թէ ինչ բան է պատերազմը, արիւնհեղութիւնը, որդեկորոյս մօր սուգն ու շիւանը:

Բայց ունի ճրագն է մինչև լոյս վառուել, այդ ռր գարունն է, որ առանց որոտ ու փոթորկի է անցել. պատմութիւնն արդեօք յիշում է մէկին,

որի երեսին երկինքն ու աստղերը մինչև կեանքի վերջը ժպտալիս լինէին:

Մի օր դժբաղդութիւն սլատահեց և Ռազմ թագաւորի տանը. պալատական հոյակապ խընձոյքից յետոյ ծանրապէս հիւանդացաւ նրա ամենասիրելի որդին, որը գուշակների խօսքի համեմատ պիտի ժառանգէր հօր թագաւորութիւնը, հակառակ դիպուածում այդ թագաւորութիւնը պիտի մատնուէր անխուսափելի կորստեան:

Հաւաքուեցան թագաւորի գուշակներն ու իմաստունները և երկար-բարակ խորհրդակցելուց յետոյ ասացին.

«Մեծ թագաւոր, քո սիրելի, քո աչքի լոյս որդու փրկութեան համար միայն մի միջոց կայ. դու նրան պիտի լողացնես անմեղ արտասուքներից հաւաքուած աւաղանի մէջ, և նա իսկոյն կրկենդանանայ, կառողջանայ»:

— Ո՞րտեղից ես գտնեմ այդչափ արտասուք, որ նրանցից իմ որդու համար կարողանամ բաղնիս պատրաստել, — հարցրեց թագաւորը յուսահատ մտքերով պաշարուած:

Ռազմ թագաւորը լիովին հաւատացած էր, որ իր ժողովուրդը կատարելապէս խաղաղութիւն է վայելում, որ իր պետութեան մէջ արդարութիւնն այն աստիճան է տիրապետում, որ դժուար թէ այդպիսի մեծ քանակութեամբ արտասուք հաւաքելու հնարաւորութիւն լինէր:

Թագաւորի իմաստունները պատասխանեցին. «Մեծափառ արքայ, քո ընդարձակ տէրութեան չորս կողմն ուղարկիր խուզարկու մարդիկ, և նրանք քո ցանկացածը կը գտնեն ու կը բերեն քեզ. թշուառութեան արտասուք ամեն տեղ էլ կը ճարուի. դու յոյս մի դնիր քո բարութեան վրայ. չէ՞ որ լոյսը միշտ ստուեր է ծնում և համբոյրը՝ մատնութիւն»:

Թագաւորը խոր մտածմունքի մեջ ընկաւ և ասպա դիմեց իր իմաստուններին ու ասաց.

«Եթէ դուք համոզուած էք, որ իմ երջանիկ կարծուած պետութեան մէջ այնքան արտասուք կարելի է հաւաքել, որ նրանցից հնարաւոր լինի անբաղդ որդուս բժշկութեան համար աւաղան պատրաստել, դէ, այդ գործը ես ձեզ եմ յանձնում, իմ իմաստուն խորհրդականներ»:

Այս ասաց-չասաց թագաւորը, հրամայեց, որ իր իմաստուններից իւրաքանչիւրին տան մի-մի հատ ոսկի սափոր, պարտաւորեցնելով, որ նրանցից ոչոք չհամարձակուի դատարկ վերադառնալու:

Թագաւորի հրամանը կատարուեցաւ:

Եւ գնացին Ռազմ թագաւորի իմաստունները ոսկի սափորները ձեռներին որոնելու և ժողովելու բաղդաղուրկ, տանջուած ու վշտահար մարդկանց արտասուքները:

Ամառուայ շոգն ու կրակը գիւղացուն առատ հունձ էին պարգևել. նա գործն արդէն վերջացրած՝ իւրայիններով շրջապատուած հանգըստանում էր խուրձերի դէզերի տակ:

Նա փառք տուեց Աստուծուն և այսպէս աղօթեց. «Երկնուց մինչև գետին շնորհակալ եմ քեզանից, Արարիչ Աստուած, որ այսքան տարուայ անբերրութիւնից յետոյ դու մեզ առատ ցորեն ու գարի տուիր, վերջապէս այս տարի ձմեռը մենք կուշտ հաց կունենանք, պարտքերիս մի մասն էլ կը վճարենք, բայց սա դեռ բաւական չէ. ես կարող եմ Մխիթարիս էլ պսակել, Արշալոյսիս, Արփիկիս ու Մանուշակիս էլ դպրոց ուղարկել. չէ՞ որ, Տէր Աստուած, մենք էլ ուրիշների նման մարդ ենք, թող մենք էլ մին ճանաչենք գրի սեն ու սպիտակը և մարդու շարք անցնենք, թող մենք էլ մի օր ուրախութիւն տեսնենք: Փառք քեզ, Աստուած, փառք քեզ. քո կամքն օրհնեալ լինի»:

Գիւղացին դեռ նոր էր վերջացրել իր փառաբանութիւնը, որ ահա լուր եկաւ գիւղից, թէ եկել են թագաւորի հարկահանները և անբերրութեան տարիներից մնացած պետական ապառիկ տուրքերը լրիւ պահանջում են. թագաւորն, առում են, փողի մեծ կարիք ունի, մեծ-մեծ նաւեր է շինում, երկաթեայ կամուրջներ է ձգում գետերի ու նեղուցների վրայ. նա իր սիրելի

որդու համար չտեսնուած ու չլսուած փարթամ պալատներ է շինում:

Գիւղացին վաճ տուեց գլխին, իր սև օրը ողբաց. նա դիտէր, թէ ինչ բան է թագաւորի հրամանը, և իսկոյն նրա աչքերին պատկերացաւ անցեալ տարիների ցրտահար ու սովատանջ կեանքը: Նա խոր անքաշեց, և ակամայ արցունքները խոշոր կաթիլներով սկսեցին գլորուել նրա խորունկ աչքերից. հօր արտասուքներին հետեց Մխիթարինը, Մանուշակինը, Արշալոյսինը, Արփիկինը...

Թագաւորի իմաստուններից մէկն եկաւ ու իր ոսկի սափորի մէջ հաւաքեց վշտի աղբիւրից բղխած այդ դառն արտասուքները:

Հարաւի գեղանի հովուհին իր հօր այծերն արածացնում էր անմատչելի բարձր սարերի վերայ. ազատանի երիտասարդ որսորդը՝ քարերի ու լեռների հարազատ զաւակ այծեամին հալածելով՝ յանկարծ ապառաժի գլխին կանգնած տեսաւ գեղաշուք հովուհուն, որ արձակ մաղերը քամուն տալով՝ անհոգ իր սրինգն էր կլկլացնում: Որսորդը այդ վեհ պատկերը տեսնելով՝ յանկարծակի եկաւ. նա շանթահարուածի նման ցնցուեց ամբողջ մարմնով, և նեւ-աղեղը վայր ընկաւ նրա անզօրացած ձեռքերից. ապա նա խելադար կատաղութեամբ առաջ վազեց, ընկաւ վայրենի գեղեց-

կուհու ոտները ստակը, աղաչեց, լաց եղաւ, օձի նման գալարուեց և վերջ ի վերջոյ վաստակեց նրա սէրը, և պարզամիտ հովուհին ամբողջովին հլու-հպատակ սրտի կրակոտ յոյգերին՝ անձնատուր եղաւ իր սիրոյ առարկային:

Անցաւ մի քանի օր անուրջքի նման քաղցր ու մշուշային: Նա մի առաւօտ բաց արաւ իր հայրենի երկնքի նման պարզ ու վճիտ աչքերը և իր մօտ չտեսաւ ոչ իր սիրած երիտասարդին և ոչ էլ հօր հօտերը. փախել էր դաւաճան երիտասարդը, և այժերը ցրուել ու կորել էին լեռներում:

Լաց եղաւ ամեղ հովուհին այնպիսի արտասուքով, որպիսի արտասուքով կարող է լաց լինել միմիայն կուսական վշտահար սիրտը:

Թագաւորի իմաստուններէից մէկն եկաւ ու իր ոսկի սափորի մէջ հաւաքեց լեռնական կուսի բիւրեղային արտասուքները:

Անցել էր դաժան ձմեռը, և մարդիկ կատարում էին գարնանամտի տօները. շրջակայ գիւղերից ու քաղաքներից մեծ բազմութիւն էր հաւաքուել սրբազան բարձունքների վրայ. գեղեցիկ բուրակը կանաչադարձ պսակ էր հիւսել կոնաձև բլրի կատարին, որի վրայ պարող, երգող ու թռչկոտող տղաներն ու աղջիկներն իրենց խայտաբղէտ տարազով, վարդագոյն ու սպիտակ թշերով մրցման էին բռնուել այն երփնե-

րանգ ծաղիկների հետ, որոնք զարդարում էին սարի լանջերը:

Այդ օրը նշանադրութեան տօն էր, և սիրահար զոյգերը բնութեան ազատ գրկում իրար հետ ծաղկեփնջեր փոխանակելով կապում էին իրենց ապագայ ամուսնութեան առաջին և ամենանշանկալի ուխտը:

Որքան երիտասարդ սրտեր անուշ յոյգերով ու յոյսերով երազել ու սպասել էին այդ երանաւէտ օրուան. սակայն այս տարի սև ու մութ օր եղաւ նա և, փոխանակ խինդ ու ծիծաղի, անէծք ու արտասուք բերեց ամենի համար:

Տօնը վերջանալու վրայ էր, որ մին էլ տեսնես մուկնետիկներ եկան, որոնք բարձր ձայնով յայտարարում էին թագաւորի հրամանը, թէ՛ արքայազուներէիցմէկը պիտի ամուսնանայ, դրա համար հարկ է, որ բոլոր գեղանի կոյսերը հաւաքուեն պալատական մեծ հրապարակը, որպէս զի արքայի որդին կարողանայ նրանցից իր համար ամուսին ընտրել գեղեցիկներից գեղեցկագոյնը:

Թագաւորի ղինւորները բռնի ուժով իրարուց բաժանեցին սիրահար սրտերը և աղջիկներին ոչխարների հօտի նման առաջ գցելով՝ բշեցին տարան դէպի արքունիքի մեծ հրապարակը:

Մղկտացին երիտասարդները, վշտի ծով դարձաւ կոյսերի սիրտը. նրանց ողբ ու կոծը սար ու ձոր բռնեց: Բնութիւնը ձայնակցեց մարդկանց

վշտին, և ծանրացած ամպերից սկսեց անձրև շաղել...

Թագաւորի իմաստուններից մէկն եկաւ ու իր ոսկի սափորի մէջ հաւաքեց այդ աղեխարշ արտասուքները:

Առաւօտը դեռ նոր էր լուսանում. խոնաւ խրճիթի մէջ մի կոյտ մանրիկ զուականեր՝ գետնաշոք շրջապատած իրենց տակաւին երիտասարդ հօր դիակը՝ անմխիթար ողբում են ու կոծում:

Նրանց հայրը առոյգ, ուժեղ գիւղացի էր, բայց իր սեպհական հողը չունէր մշակութեան համար. նա վարձուեցաւ կալուածատիրոջ ազարակում աշխատելու. նա աշխատում էր ուժից բարձր, բայց կերածն ու խմածը մի չոր հացի կտոր էր և անապակ ջուր: Ալատուեցան նրա ուժերը. հիւանդութիւնը տիրապետեց նրան և մի առժամանակ անկողնին գամելուց յետոյ՝ սառն գերեզման իջեցրեց:

Անգութ կալուածատէրը մշակի հիւանդ պառկած օրերի վարձն անգամ չտուեց, և նա համարեա քաղցած մեռաւ, յաւիտենական քաղցի ճիւղանների մէջ թողնելով իր ցաւազար կնոջը և սովալլուկ մանուկներին:

Նրանք լալիս էին, և այդ լացի հետ միասին կարծես առկայծող ճրագի նման մարւում էր մի թշուառ ու սոված ընտանիքի կեանքը:

Թագաւորի իմաստուններից մէկն եկաւ ու իր ոսկի սափորի մէջ ժողովեց այս մերկ, յուսահատութեան դուռը հասած խեղճերի արտասուքը:

Թագաւորի իմաստունները դարձեալ շատ տեղեր ման եկան, շատ ցաւերի ու վշտերի ականատես եղան. նրանք տեսան որբի քարացած արտասուքը, անմեղ բանտարկուածների անլուր հեծածանքը այն ժամանակ, երբ նրանց բանտը նետող բռնաւորները լողում, լզուում էին պատուի ու լիութեան մէջ. նրանք տեսան տառապեալ, բեռնաւոր ու վաստակած մարդկանց դժոխային աշխատանքը և դրա փոխարէն նրանց կրծած սև հացի կտորը. նրանք տեսան աշխարհիս երեսին կատարուող ոճիրներն իրենց այլանդակ ու վայրագ արտայայտութեան ու ձևի մէջ—սպանութիւնը, կողոպուտը, հալածանքը, հայհոյանքը, մահը, անէծքը, արիւնը...

Իւ այս բոլորը, բոլորը նրանք ամենայն խնամքով հաւաքեցին իրենց ոսկի սափորների մէջ. և երբ ամեն բան կատարեցին վերջացրին, յետ դարձան Թագաւորի մօտ:

Թագաւորն անհանգիստ շարժումներով դիմեց իր իմաստուններին և ասաց. «Դէ, ժամանակ մի կորցնէք. մեծ է որդու տառապանքը. շուտով բերէք ձեր հաւաքած արտասուքը և աւազան պատրաստեցէք»:

Թագաւորի հրամանն իսկոյն կատարուեցաւ. նրա իմաստունները բերին իրենց հաւաքած արտասուքները և ածեցին մարմարիոնեայ աւազանի մէջ. բայց այնքան քիչ էին նրանք, որ նրանց մէջ անհնարին եղաւ լողացնել Թագաւորի հիւանդ որդուն:

Իմաստունները տարակուսանքի մէջ ընկան, իսկ Թագաւորը յուսահատ բացականչեց. «Անբաղդ որդի, դու մեռնում ես, և քո մահուան պատճառը ես եմ, ես, քո անարժան հայրը. եթէ ես այնքան բարի ու մարդասէր չլինէի, եթէ ես այնպիսի մեղմ ու արդար օրէնքներով չկառաւարէի իմ ժողովուրդը, այժմս կարելի կըլինէր նրա արտասուքից ոչ միայն աւազան, այլ ծովեր գոյացնել, և իմ որդին կենդանի ու առողջ կըլինէր»:

Իմաստուններից մէկը համարձակութիւն ունեցաւ Թագաւորին պատասխան տալու.

«Տէր արքայ, չափազանց վտանգաւոր է մարդկանց արտասուքների հետ խաղալը. կան նոյնպէս այնպիսի թշուառներ, որոնց վշտի մեծութիւնից չորացել են աչքերի աղբիւրակները և արտասուք չեն արտադրում. եթէ մի օր այդ բոլոր արտասուքները դուրս ցայտէին մարդկանց աչքերից, ապա մենք ականատես պիտի լինէինք մի երկրորդ համատարած ջրհեղեղի»:

— Արտասուքի բացակայութիւնը դեռ ևս

ապացոյց չէ ժողովրդի բաղդաւորութեան, — վրայ բերեց իմաստուններից մի ուրիշը:

Թագաւորը չլսեց այս վերջին խօսքերը և, կատաղաբար ձեռները օդի մէջ շարժելով, գոռում էր մոլեգնաբար.

«Բանալ թշուառների աչքերի աղբիւրակները, սաստկացնել իմ պետութեան մէջ բռնութիւնը, ճնշումը, բանտը, կախաղանը, քամել հպատակներիս աչքերից նրանց արտասուքի վերջին կաթիլը և փրկել իմ աչքի լոյս գաւակիս»:

— Դա անհնարին է, — պատասխանեցին իմաստուններն ընկճուած ձայնով:

Թագաւորը շարունակում էր յուզուել:

«Էլ ի՞նչ է մնում ինձ անել. դէ, շուտ, ասացէ՛ք. թւում է, թէ որդիս իր վերջին օրերն է ապրում. բայց ես նրան, երգւում եմ Աստուծու անունով, պիտի ազատեմ մահուան ճիրաններից, թէկուզ ինչ գնով էլ որ լինի»:

Իմաստուններն անզօր կագնել էին Թագաւորի առաջին և գլուխները քաշ գցել:

Թագաւորն սպառնաց գանակոծել նրանց, արսոր քշել, կախաղան բարձրացնել:

Սպառնալիքն իսկոյն իր հետևանքը ցոյց տուեց. իմաստունները հեռացան խորհրդակցելու և կարճ ժամանակից յետոյ աւազագունի բերանով յայտնցին.

«Պատերազմ»:

— Պատերազմ... մեքենայաբար, անզիտակ-
ցօրէն թոթովեց թափաւորը. — պատերազմ... բայց
չէ որ ես, իմ հանգուցեալ հայրը և մերձաւոր
պապերս ամենեկին չենք փորձել ու չենք տեսել,
թէ ինչ բան է պատերազմը. ինձ սարսափեցնում
է այդ բառը և մղձաւանջի նման ճնշում է սիրտս:

— Այո, սոսկալի է պատերազմը իր նախճիր-
ներով, բայց նա միակ ճանապարհն է, որը ան-
վրէպ քեզ կրտանի դէպի քո նպատակը, — պատաս-
խանեցին իմաստունները:

«Պատերազմ... թող լինի պատերազմ, եթէ
ուղիղ են ձեր խօսքերը, — վճռական շեշտով բացա-
կանչեց թագաւորը և, թաւ յոնքերը կիտելով մոայլ
աչքերի վրայ, ձեռքով նշան արաւ իմաստուն-
ներին ցրուելու:

— Պատերազմ... եւ մի անգամից փոխուեց
երկրի բարոյական և արդիւնաբերական դէմքը:

Գիւղ ու քաղաքներում երկաթ ու պողպատ
չմնաց. ամենքը դարձան հաւաքեցին ու նրանցից
սուր սուրին կռեցին-կռփեցին: Դադարեց աշխա-
տանքը դաշտ ու այգիներում. նաւեր շինելու
համար գիւղացիներին անտառ բռնեցին փայտ կը-
տրելու: Գիշեր ու ցերեկ սկսեցին գործել նաւա-
շինարանները. վարպետ ու բանուոր պատերազմի
պատրաստութիւններով էին զբաղուած:

Հացթուխները հաց էին թխում և պաքսիմաթ

չորացնում... պատերազմի համար: Դերձակները
շոր և կօշկակարները կօշիկ էին կարում... պա-
տերազմի համար: Դարբինները զէնք ու զրահ շի-
նեցին, պայտառները պայտեցին ձիերը... պա-
տերազմի համար:

Փակուեցան դպրոցները, գիտական ու բա-
րեգործական հիմնարկութիւնները... պատերազմի
սպառնալիքի ազդեցութեան տակ: Հաւաքուեցան
ճարտասան հրապարակախօսներն ու կրակոտ հոե-
տորները հրապարակների վրայ և գրգռիչ ճառեր
արտասանեցին պատերազմի մասին. թագաւորը
իր իմաստուն խորհրդականների հետ բարձրագոյն
խորհրդի նստեց, ուր խորհում ու խօսում էին
պատերազմի մասին:

Երկար աշխատանքներից յետոյ վերջապէս
պատրաստ էր Ռազմ թագաւորի առաջին պատե-
րազմական նաւախումբը. հայրենիքի ամենաուժեղ
և կայտառ զաւակներին տասնեակ հազարներով
նստեցրին նաւերի վրայ ու քշեցին հեռու ան-
ծանօթ երկիրներ:

Անցաւ մի քանի ամիս. թագաւորն ու իր
հպատակները սպասողական անորոշ դրութեան
մէջ էին. մի օր փոթորկի ու մրրկի մէջ մի խղ-
ճուկ նաւակ մօտեցաւ ափին. ժողովուրդը դէպի
նաւը թափուեցաւ. նաւից դուրս եկան երեք նա-
ւաստիներ և լալազին յայտնեցին. «Գնացէ՛ք ա-
սացէ՛ք թագաւորին, որ մեր նաւերը ամենքն էլ

բաց ծովում զոհ՝ դնացին կատաղի ալիքներին, և միայն մենք երեք հոգի ազատուեցանք»:

Այս գուժը կայծակի արագութեամբ անցաւ ընդարձակ երկրի մի ծայրից մինչև միւսը և խոր սգի մէջ համակեց ամենի հոգին:

Թագաւորի իմաստունները լիուրի օգտուեցան այս աղէտի բոլոր պարագաներից, առատ առատ արտասուք հաւաքեցին իրենց ոսկի սափորների մէջ և դարձեալ միաբերան վկայեցին, որ հաւաքած արտասուքը անբաւարար է նախադրուած նպատակին հասնելու համար:

Թագաւորը, անսալով իր իմաստունների խորհրդին, հրամայեց մարզել ու զինել երկրորդ, երրորդ... նաւախմբերը:

Լաւ սպառազինած նաւատորմիդները հմուտ զեկավարների առաջնորդութեամբ ամիսներ ճանապարհ կտրելուց յետոյ հասան հեռաւոր կղզիներ և առանց ժամանակ կորցնելու սկսեցին իրենց աւերիչ գործը. սպանեցին, աւերեցին ու այրեցին ձեռներն ընկածը:

Երբ այդտեղ այլևս կործանելու և յափշտակելու ոչինչ չմնաց, նրանք նաւեցին ուրիշ երկիրներ, ուրիշ կղզիներ ու նոյն աւերն ու թալանն արին: Վերջապէս յոգնեցան Ռազմ Թագաւորի քաջարի զինւորները արիւն թափելուց և պատրաստուած էին յաղթական փառքով հայրենիք վերա-

դառնալ: Նրանք բանակ դրին ծովափին և խաղաղ հանգստանում էին:

Բայց Աստուած այդ բաղդը կտրել էր նրանցից:

Աւերուած կղզիների բնակիչների մեծագոյն մասը առաջին սարսափի ազդեցութեան տակ սարերն էր փախել. բայց երբ նրանք փոքր ինչ ուշքի եկան և տեսան իրենց անգութ դահիճների գործած ոճիրները, նրանց սիրտը վառուեց ատելութեան վրէժխնդիր կրակով:

Մի գիշեր, երբ Ռազմ Թագաւորի զինւորները խաղաղ քնած էին իրենց վրանների մէջ, որովհետև այլևս ոչ մի տեղից ոչ մի կապածի տեղիք չուէին, յանկարծ սարերում թագնուած տեղացիներն ամեն կողմից վրայ տուին ու հրդեհեցին նրանց վրանները: Կրակը կատաղի քամու օգնութեամբ այնպիսի արագութեամբ տարածւեց ու այնպիսի անակնկալի բերեց քնած զինւորներին, որ նրանք շուարած ու շշկուած՝ այրուեցան ու հրի ճարակ դարձան: Միայն շատ բշերին յաջողուեց ազատութիւն գտնել իրենց նաւերի մէջ, որոնք և այս սոսկալի աղէտի բօթը երկար ժամանակ անցնելուց յետոյ միայն կարողացան հասցնել իրենց Թագաւորին:

Բաժակը լցուեց...

Սա թշուառութեան վերջին կաթիլն էր, որ Ռազմ Թագաւորի լայնածաւալ պետութիւնը դարձրեց լացի ու արտասուքի ծով:

էլ մարդ չկար, էլ տուն չմնաց, որ կորուստ չունենար: Սգի մէջ էին որդեկորոյս մայրերը. սե էին հագել մատաղահաս այրիները. քաղցից ու ծարաւից մղկտացող խղճուկ որբերի աղաղակը մինչև երկինք էր բարձրանում:

Թագաւորի իմաստուններն առատ հունձ ունեցան և զնացին ու առատ-առատ հաւաքեցին ժողովրդի աչքերից առուի նման Թափուող արտասուքները:

Ամեն ինչ արդէն պատրաստ էր:

Իմաստուններն եկան Թագաւորին յայտնելու.

«Աւազանն արդէն պատրաստ է»:

Այդ միջոցին Թագաւորն իր որդու ձեռքից բռնած ներս մտաւ դահլիճ, ուր նրան սպասում էին իմաստունները, և զայրացած ասաց. «Իմ որդին ահա, ինչպէս տեսնում էք, բոլորովին առողջ է. դուք հետևապէս խաբեբաներ էք. դուք մոլորեցրիք ինձ, դուք ինձ մարդասպան դարձրիք, և հիմա իմ հպատակների արեան հեղեղից առաջացած կարմիր գետերը պատրաստ են ինձ էլ, իմ ամբողջ Թագաւորութիւնն էլ խեղդել իրենց գոլ ու գոռ կոհակների մէջ... Դուք ինձ դարձրիք իմ հպատակների անէծքի անարգ առարկան և խաղաղութիւնից ու երջանկութիւնից հիւսած իմ դրախտանման Թագաւորութեան վերջալոյսը ներկեցիք ծիրանաներկ արեան ցօղերով... Դուք իմ ոսկի Թագաւորութիւնը վշտի ծով դարձրիք և իմ

փառքը, իմ անունը, պատիւը խեղդեցիք նրա մէջ»:

Այս ասելուց յետոյ Թագաւորը կանչեց դահիճներին ու կարգադրեց.

«Տարէք այս հրէշներին և ածեցէք այն աւազանի մէջ, որ իրենք պատրաստել են իմ որդու համար»:

Թագաւորի հրամանը իսկոյն կատարուեցաւ. սակայն հրաշքը կատարուեցաւ այն ժամանակ, երբ ոչ ոք չէր սպասում. — երբ Թագաւորի իմաստուն համարուած խորհրդականներին ածեցին արտասուքի աւազանի մէջ, նրանք ամենքն էլ այնտեղ աղի արձաններ դարձան:

Անցան տարիներ, դարեր. հինը կորաւ անցեալի մթութեան մէջ. մոռացուեցան Ռազմ Թագաւորի ոճրագործ իմաստունների մահասարսուռ արարքները. հեռաւոր սերունդներն արտասուքի աւազանից լոյս աշխարհ հանեցին անյոք քարացած արձանները, որոնք մինչև օրս էլ շարունակում են զարդարել Թագաւորների պալատները, որպէս անխօս, բայց զաղտնի խորհրդականներ:



ԽՈՋԸ ԵՒ ԱՐԾԻԻԸ

Խոջն աշխարհիս երեսին ամենից առաւել նախանձում էր երկնքի թռչուններին, որոնք թռելը բաց արած ազատ ճախրում են օդեղէն ովկիանում:

Նա իր բոլոր պակասութիւններից ամենախոշորը համարում էր իր թռչել չիմանալը, որով և ստիպուած էր երկրիս վրայ միշտ կեդտի ու աղբի մէջ թաւալուել:

«Ո՛հ, եթէ ես թռչել իմանայի, բարձր թռչել արծւի պէս ու երկնքում ամպերի հետ խաղալ, այն ժամանակ բոլորովին տարբեր բան կըլինէր. ինձանից կալնածէին, ամենքը պատիւ կըտային. ես ամենի ուշադրութեան առարկան կըդառնայի, իմ մասին կըխօսէին, կըզրէին»...

Մի օր շատ շոգ էր. խոջն ամբողջովին ցեխի մէջ թաթախուած՝ նոր էր դուրս եկել լճակից և դունչը վերև բարձրացրած՝ նայում էր կաղնու ծառին, որ յանկարծ բարձր ժայռի գլխին տնաւ արծւին:

Մին էլ տեսնես, հոյակապ արծիւը բաց արաւ զօրեղ թռելը և թռաւ դէպի վեր, դէպի վեր, դէպի կապուտանկ երկինքը...

«Ահա թէ ինչումն է եղել գաղտնիքը,—մըտածեց ինքն իրեն խոզը.—ուրեմն թռչելու համար նախ պէտք է բարձրանալ այն բարձր ապառաժի գլուխը անդունդի բերանին և ապա թռչել»...

Խոջի ասելն ու կատարելը մէկ եղաւ:

Նա մեծ նեղութեամբ, արիւն քրտինք թափելով վերջապէս հասաւ լեռան գլուխը և բարձրացաւ, կանգնեց ուղիղ այն քարի վրայ, ուր մի փոքր առաջ նստած էր արծիւը:

Խոջի ուրախութեանը վերջ չկար. նա արդէն մօտեցել էր իր նպատակին. երկար չսպասեց նա, բոլոր ոյժը մէկ արաւ և մեծ թափով դէպի առաջ նետուեց... Բայց ո՛հ, չար ճակատագիր, փոխանակ արծւի նման դէպի երկինք գնալու, սոսկալի ուժգնութեամբ վայր գլորուեց անդունդի գլխից ու տեղն ու տեղը խեղճ կենդանին ջարդ ու փշուր եղաւ:

Աստուած խոզին թռչելու շնորհք չէ տուել...



ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Հայկական լեզունդ)

Խաւար... անդնդային բաժնի:

Տիեզերական ահուկի ուկիւնոսը կատաղի մոնչում է յաւիտենականութեան և տարածութեան անհուն ընդարձակութեան մէջ:

Սակայն Աստուծուն դիւր չեկաւ անչափ ու անորոշ բաօսը, տիգերքի մոայլ զանգուածքը, կատաղի փոթորիկների աննպատակ տատանումները, և նա մտածեց ստեղծագործել...

Եւ ստեղծեց Աստուած խաղողի վազը:

Առաջուայ նման դարձեալ ուժգին մոնչում են ալիքներն իրենց մոայլ փայլով, բաղխում են իրար, փրփրում, խորտակում, նորից ուռչում ու կրկին չբանում:

Բայց վազը կանգնած է անդրդուելի, հըպարտ և վեհ, որովհետեւ նրան իր տեղում ամրացրել է Արարչի ամենազօր աջը:

Վազն արարչագործելուց յետոյ Աստուած այլևս ոչինչ չստեղծեց և կամենալով գործի դնել

բնութեան մէջ Թագնուած գաղտնի ոյժերը՝ իր սկսած գործը յանձնեց յաւիտենական ու անեղծ ծովին:

Յուզուեցին ջրերը, երկունքով բռնուեց անդնդային խորութիւնը, և ծովը լցուեց բիւրաւոր մանր ու անտեսանելի ձիճուներով, որոնք սակայն երկարատե կեանք չունենալով՝ անհաւատալի արագութեամբ ծնւում էին, մեռնում, կրկին ծնուելու և կրկին մեռնելու համար:

Անցան հազարամեակներ. մեռնող կենդանիների գերեզմանների սպիտակ շերտերը փոքրիկ ածուների նման դուրս ցցուեցան ջրի մակերևոյթից և յենարան, ամուր պատուանդան կազմեցին խաղողի վազի համար:

Վազն էլ աւելի սկսեց ճոխանալ, փարթամանալ և նորանոր ընծիւղներ արձակել:

Հեռու, շատ հեռու բարձրութիւնից նայեց Տէրը ծովին ու ժպտաց. անթափանցելի մառախուղը տեղի տուեց երկնածագ լուսի շառաւիղներին: Աստուծուն այս նուագ չափազանց հաճոյ թուեցաւ բնութեան ներկայացրած պատկերը և նա լի բերկրութեամբ բացականչեց.

«Շարունակիր, դու շարունակիր ստեղծագործել, ո՛վ ազատ տարերք, դու այդ բանի մէջ լիովին արժանի ես քո Արարչին»:

Երկնախօս ձայնը լռեց:

Ծովն այժմ առաջուայ մոայլութիւնը չունէր.

նա այժմս աւելի պայծառ ու զուարթատեսիլ է երևում քան առաջ:

Կեանքը եռում է ծովի մէջ. փոքրիկ ճիճուների փոխարէն արդէն լողում են այնտեղ աւելի խոշոր կենդանիներ՝ ոստրէներ, մարջաններ, ձրկներ, սողուններ:

Սակայն սպիտակատեսիլ ածուները շարունակ ողողուելով ծովի ալիքներով՝ անընդհատ աճում ու աճում են դէպի բարձր և շուրջը:

Խաղողի վազն աւելի շքեղացած՝ փնջաւոր մանրիկ ծաղիկներ է արձակում: Նա պատրաստւում է պտուղ բերել. նրա ծաղիկների անուշ բուրմունքը տարածւում է շրջակայքը թէ ծովի և թէ ցամաքի վրայ:

Այս տեսնելով՝ Արարչի սիրտը լցւում է բերկրութեամբ և նա երկնային լուսականների շողջով պարփակուած երեւցաւ ու խնդութեամբ ասաց.

«Շարունակիր, շարունակիր դու, ո՛վ ազատ տարերք. շարունակիր ստեղծագործել, և ես կօրհնեմ քո գործը յաւիտեանս»:

Ծովի մէջ եռում է կեանքն ու գործունէութիւնը. գետերի միջով նա կենդանիների մի մասը դուրս է բշտում դէպի ցամաք: Նրանք հետզհետէ ընտելանում են նոր կեանքի պայմաններին և դառնում են ցամաքային կենդանիներ:

Վազի շուրջը բուսականութիւնն սկսում է

էլ աւելի ուշագրաւ դառնալ: Խոտերի ու ծաղիկների մէջ բուն են դնում այլևայլ միջատներ ու սողուններ, իսկ թփերի վրայ առաջին անգամ քաղցր ձուռղել սկսեցին անդրանիկ թռչունները:

Այս նուագ երկինքն սկսեց հետզհետէ էլ աւելի պարզուել և ստացաւ այն կապոյտ բիւրեղային դիւրեկան մեղմ գոյնը, որպիսին մինչև օրս էլ մենք տեսնում ու դիտում ենք, մանաւանդ հարաւում, աստղազարդ պարզ գիշերները:

Ծովն սկսեց աստիճանաբար կուչ գալ ու սեղմուել իր ափերի մէջ: Ջրի տակից դուրս պլրծած ցամաքը բարձրագլուխ տարածւում է հեռու, շատ հեռու կազմելով լեռներ, դաշտեր, հովիտներ, կիրճեր, անտառներ ու անապատներ, ուր ապաստարան էին գտնում անհամար կենդանիները և ազատ վազվզում գիշակեր վայրի գազանները:

Երբ Արարիչ-Աստուած իր եթերային բարձրութիւնից դիտեց ու տեսաւ այս ամենը, նրա սիրտը հայրական խնդութեամբ լցուած՝ բացականչեց.

«Դու արժանի ես, ո՛վ բնութիւն, քո Արարչին. շարունակիր վերին տեսչութեամբ քեզ վիճակուած գործը՝ զարգացնելով բնութեան ոյժերն ու պտղաբերութիւնը»:

Փաջալերական ձայնը լռեց. լուռ է և բնութիւնը ներքեւում, նա երկար ժամանակ անպա-

նա այժմս աւելի պայծառ ու զուարթատեսիլ է երևում քան առաջ:

Կեանքը եռում է ծովի մէջ. փոքրիկ ճիճուների փոխարէն արդէն լողում են այնտեղ աւելի խոշոր կենդանիներ՝ ոստրէներ, մարջաններ, ձրկներ, սողուններ:

Սակայն սպիտակատեսիլ ածուները շարունակ ողողուելով ծովի ալիքներով՝ անընդհատ աճում ու աճում են դէպի բարձր և շուրջը:

Խաղողի վազն աւելի չքեղացած՝ փնջաւոր մանրիկ ծաղիկներ է արձակում: Նա պատրաստւում է պտուղ բերել. նրա ծաղիկների անուշ բուրմունքը տարածւում է շրջակայքը թէ ծովի և թէ ցամաքի վրայ:

Այս տեսնելով՝ Արարչի սիրտը լցւում է բերկրութեամբ և նա երկնային լուսականների շողքով պարփակուած երևեցաւ ու խնդութեամբ ասաց.

«Շարունակիր, շարունակիր դու, ո՛վ ազատ տարերբ. շարունակիր ստեղծագործել, և ես կօրհնեմ քո գործը յաւիտեանս»:

Ծովի մէջ եռում է կեանքն ու գործունէութիւնը. գետերի միջով նա կենդանիների մի մասը դուրս է բշում դէպի ցամաք: Նրանք հետզհետէ ընտելանում են նոր կեանքի պայմաններին և դառնում են ցամաքային կենդանիներ:

Վազի շուրջը բուսականութիւնն սկսում է

էլ աւելի ուշագրաւ դառնալ: Խոտերի ու ծաղիկների մէջ բուն են դնում այլևայլ միջատներ ու սողուններ, իսկ թփերի վրայ առաջին անգամ քաղցր ձուռողել սկսեցին անդրանիկ թռչունները:

Այս նուազ երկինքն սկսեց հետզհետէ էլ աւելի պարզուել և ստացաւ այն կապոյտ բիւրեղային դիւրեկան մեղմ գոյնը, որպիսին մինչև օրս էլ մենք տեսնում ու դիտում ենք, մանաւանդ հարաւում, աստղազարդ պարզ գիշերները:

Ծովն սկսեց աստիճանաբար կուչ գալ ու սեղմուել իր ափերի մէջ: Զրի տակից դուրս պրծած ցամաքը բարձրադուխ տարածւում է հեռու, շատ հեռու կազմելով լեռներ, դաշտեր, հովիտներ, կիրճեր, անտառներ ու անապատներ, ուր ապաստարան էին գտնում անհամար կենդանիները և ազատ վազվզում գիշակեր վայրի գազանները:

Երբ Արարիչ-Աստուած իր եթերային բարձրութիւնից դիտեց ու տեսաւ այս ամենը, նրա սիրտը հայրական խնդութեամբ լցուած՝ բացականչեց.

«Դու արժանի ես, ո՛վ բնութիւն, քո Արարչին. շարունակիր վերին տեսչութեամբ քեզ վիճակուած գործը՝ զարգացնելով բնութեան ոյժերն ու պտղաբերութիւնը»:

Քաջալերական ձայնը լռեց. լուռ է և բնութիւնը ներքեւում, նա երկար ժամանակ անպա-

տասխան թողեց իր Ստեղծողի հրամանը: Կարծես, նա ծանր երկունքի մէջ էր և պատրաստուում էր ծնել, լոյս աշխարհ հանել իր զաւակներին ամենագեղեցկին, որը պիտի կազմէր աշխարհի թագն ու պսակը:

Վրայ հասաւ այն նշանալից և անեղահրաշ վայրկեանը, որի նմանը չի յիշում պատմութիւնը և որն այլևս չէ կրկնուելու յաւիտեանս:

Ծովն յանկարծ դադարեցրեց իր վէտ-վէտ արիքների շոխչը. լոեցին ամպերը, որոտը, կայծակը. ստորերկրեայ ոյժերը կանգ առան զործելուց. քամին խաղաղուեց. կենդանիներն ու թռչուններն անխօս մնացին:

Ոչ ձայն, ոչ ծպճւտ ..

Հեռու արեւելքում գեղգեղում է ծիրանագոյն նորարշալոյսը. այդ աստուածներն են իրենց ողջագութրանքն ուղարկում աշխարհին. այդ նրանց լուսաբուխ դէմքերի շողքն է, որ իր կեանքը կապում է երկրի հետ:

Ծնունդ է առնում առաջին մարդը:

Աստուածային ամենահանճարեղ բանաստեղծներից մէկը, որպիսիք միայն գոյութիւն են ունեցել երբեք, տիեզերքի արարչագործական այդ մեծ վայրկեանը անմահացրել է իր քնարով ու ոսկի շրթունքներով, սակայն առանց այլաբանութեան.

«Երկնէր երկին և երկիր,

«Երկնէր և ծիրանի ծով.

«Երկն ի ծովն ունէր զկարմրիկ եղեգնիկն.

«Ընդ եղեգեան փող ծուխ ելանէր,

«Ընդ եղեգեան փող բոց ելանէր

«Եւ ի բոցոյն պատանեկիկ մի վազէր.

«Եւ նա հուր հեր ունէր,

«Ապա թէ բոց ունէր մորուս

«Եւ աչքունքն էին արեգակունք»:

Եւ հուր հեր, բոց մորուս, աչքունքն արեգակունքն ունեցող, և ծուխ ու բոցի միջից վազող այդ պատանեկիկի ուսին յենուած՝ թե ի թե ընթանում էր մի ասլ նազելի էակ, որի մասին երկնային բանաստեղծը համեստութիւն է արել լոեւ. նրա ճնաշխարհիկ հոլանի մարմինը, որ ամբողջովին մարմնացեալ արտայայտութիւն էր կրքի, սիրոյ և անդուլ եռանդի՝ սքօղուած էր ծիրանի ծովի ծիրանազարդ մշուշով. նա աշխարհի թագուհին էր, և նրա նազելի աչքերի խորութեան մէջ անդրադառնում էր և՛ ծովը, և՛ երկինքը, և՛ աստղերը, և՛ երկիրը...

Նայողթական կերպով գալիս էր նուաճելու աշխարհը, և մինչև այդ լուռ արած ձայները, բոլոր ձայն հանող շնչաւոր և անշունչ առարկաները մի ներդաշնակութիւն կազմած՝ ողջունեցին այդ գալուստը: Առաւօտեան ցօղաշաղ ծաղիկները լեռների լանջերից, դալար հովիտներից, գետե-

ըի ու լճերի ափերից իրենց անուշահոտութեամբ խնկարկեցին այն ուղին, որով պիտի անցնէր այդ երկնազարմ գոյգը:

Եւ կատարուեց այն, ինչոր պիտի կատարուէր. բնութիւնն արտաբերեց իր ծնունդներից ծայրագոյնը, վերջինը և հանգիստ առաւ:

Մարդն արդէն ստեղծուած էր և նա իր ճակատագրի համեմատ խսկոյն ձեռնարկեց ամայի երկրի մշակութեանը:

Աստուած վերջին անգամ յայտնուեցաւ և տնօրինեց.

«Ո՛վ բնութիւն, էլ բաւ է, դադարիր. դու պատուաւոր կերպով ի կատար ածեցիր քեզ յանձնուած գործը. այժմս հերթը հասել է մարդուն. քո սկսածը նա կը շարունակէ: Ես քեզ արտօնեցի արտաբերել լոկ իրեր, իսկ այդ իրերի մէջ թագցրել եմ դադանի կերպով մեծամեծ ոյժեր, ահելի զօրութիւն: Ես քո մէջը չգրի իմացականութիւն, կամք, միտք, զգացմունք. այդ ամենը լիուլի տուել եմ մարդուն: Եւ հիմա իրերն ուսումնասիրելու, նրանց մէջ իմ թագցրած ոյժերը բացայայտելու և առհասարակ աշխարհիս երեսին կարգ, կանոն, օրինականութիւն ու կառավարութիւն մտցնելու գործը յանձնում եմ մարդուն»:

Եւ բնութիւնից ու աստուածապարգև իմաստութեամբ ու հանճարով օժտուած մարդն սկսեց անդուլ խոկալ ու տոկալ. նա աշխատում էր գի-

շեր և ցերեկ. նա գործում էր մտքով ու մարմնով, հողով ու սրտով:

Հնազանդեցան նրան ծովի ալիքները, քամու հոսանքը. անդունդը բաց արաւ նրա առաջ իր կուսական արգանդը. մշուշապատ կաթնածիրը պարզուեց նրա հեռաթուիչ աչքերին. խօսեցին երկաթի լարերը, ապառաժներն աղաղակեցին. անթափանցիկ առարկաներն ապակու պարզութիւն ստացան. շոգու զօրութեամբ շարժուեցան հսկայ լեռները և վիթխարի կարապներ ի նման լող տուին ովկիանոսներում...

Եւ այս ամենը դեռ սկիզբն է երկանց, որովհետեւ ըստ բիբլիական բանաստեղծի՝ «Օր աւուր բղխէ զբան, և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն», և տակաւին ոչ մի մահկանացու չի յանդգնել մարդկային հանճարի ու իմաստութեան առաջ որոշ հեռանկարներ ու սահմաններ գծադրել:



ԵՐԿՆՔԻՑ ԿԱՌԱՄ ԵՂԹԱՆԵՐԸ

Շատ հին ժամանակներում, երբ մարդիկ դեռ չարն ու բարին չէին ճանաչում, Աստուած մարդկանց դատելու համար, արդարը մեղաւորից ջուրելու համար, երկնքից երկու հատ շղթայ էր կախ տուել: Երբոր մարդկանց մէջ որեւէ վէճ կամ թիւրիմացութիւն էր պատահում, նրանք գալիս էին, շղթաների տակ կանգնում և միաժամանակ ձեռները դէպի շղթաները երկարացնում: Եթէ մէկը արդար էր, շղթան քաշւում էր վայր և նա աջ ձեռքով դիպչում էր շղթային, իսկ եթէ մեղաւոր էր, շղթան վերև էր քաշւում և անկարելի էր դառնում նրան ձեռքով հասնելը:

Մէկ անգամ այսպիսի մի դէպք պատահեց.

Մի գիւղացի իր հարևանին մի արտ ծախեց. արտ առնող գիւղացին խիստ աշխատասէր մարդ էր. նա փորեց հողը, փորփրեց, այնտեղից լաւ, սիրուն քարեր հանեց տուն շինելու համար և վերջն էլ փորելու ժամանակը իր բաղդից մի աման ոսկի գտաւ:

Աշխատաւոր մարդուն Աստուած ամեն բան տալիս է, բայց դու արի և տես, որ այս բանը արտ ծախող գիւղացուն դիւր չեկաւ, և նա կամեցաւ իր հարևանի ձեռքից յետ խել ոսկու գանձը:

Երկու հարևանների մէջ վէճը սպառնալի կերպարանք ստացաւ:

Արտ ծախող գիւղացին ասում էր, որ ինքը միայն հողի երեսն է ծախել երկու կանգուն խորութեամբ, իսկ ոսկին գտնուել է տան կանգունի վրայ, հետևապէս ոսկին իրեն է պատկանում: Իսկ արտ առնող գիւղացին շատ իրաւացիօրէն պնդում էր, որ ինքը արտն առնելիս նրա հետ միասին առել է և ամենը, ինչոր գտնուում էր արտի մէջ, թէ հողի տակը և թէ երեսը, հետևապէս ոսկին իրեն է պատկանում:

Այս կռիւը գուցէ շատ երկար քաշէր, գուցէ և անախորժ բարդութիւններ պատահէին. սակայն մի խելօք մարդ նրանց խորհուրդ տուեց, որ խելքերին զօռ չտան, այլ դիմեն գիւղի մէջ յարգուած ու պատուաւոր դիրք զբաւած ծերունի Սիմէօնին:

Երկու հարևաններն եկան ծերունի Սիմէօնի մօտ և եղելութիւնը պատմեցին ամենայն մանրամասնութեամբ. ծերունին պատմութիւնը լսելուց յետոյ դիմեց նրանց և ասաց.

— Դ՛հա, արտ ծախող, որքան ես եմ իմանում,

մի շատ սիրուն հասած աղջիկ ունիս, իսկ դու, արտ առնող, ունիս մի կտրիճ տղայ. եկէ՛ք դուք ծերուկիս խօսքը մի մերժէ՛ք և իրար խնամի դարձէ՛ք. վէճի առարկայ եղած արտն ու նրա մէջը գտնուած ոսկին էլ նորապսակ զոյգին ընծայեցէ՛ք. այսպիսով նախ՝ ձեզանից ոչ ոք կորուստ չի ունենայ, երկրորդ՝ ձեր տղան ու աղջիկը կը բաղդաւորուեն և երրորդ՝ գիւղացիք էլ հարսանիքին կուտեն ու կը խնդան և ձեր կեանքն ու արկը կօրհնեն:


Երկու վիճող կողմին էլ շատ հաճելի թուաց ծերունի Սիմէօնի իմաստուն խորհուրդը, բայց նրանք կարծելով թէ՛ մի գուցէ այդ վճիռն ընդդէմ լինի Աստուծու սրտին, վեր կացան և գնացին շղթաների տակը կանգնելու, որ տեսնեն, թէ իրենցից ո՛րն է արդար և ո՛րը մեղաւոր:

Բայց սրբան մեծ եղաւ նրանց զարմանքն ու երկիւղը, երբ եկան և տեսան, որ շղթաները չկան. նրանք երկինք էին քաշուել:

Երբ գիւղացիներն ապուշ կտրած, յուսահատ, աչքերը դէպի երկինք յառած չգիտէին, թէ ինչ անեն, Աստուած հրեշտակին ուղարկեց. նրանց մօտ և ասաց. «Մինչև հիմայ մարդիկ տգէտ էին և անկիրթ, այս պատճառով էլ գտնուում էին երկնքի խնամակալութեան ներքոյ, իսկ այժմ, ինչպէս այսօր ակնյայտնի կերպով այդ բանը ցոյց տուեց ծերունի Սիմէօնը, արդէն հասել են որոշ

կատարելութեան և իրենց ձեռքով կարող են տեսնել իրենց դատաստանը. անա այս պատճառով էլ վեր են քաշուած երկնքից կախ արած մի զոյգ շղթաները»:

Ճշմարիտ է, շղթաները վերացան այն օրուանից, բայց մարդկանց ձեռքով կատարուող դատաստանն էլ մինչև հիմա դեռ մեծամեծ թերութիւններ ունի...



ԱՐԴԱՐ ՊԱՅՏԱՌԸ

Թէ երբ էր ծնուել և քանի տարեկան էր Հոսպ Թագաւորի պայտառը, այս մասին ոչ ոք ոչինչ չգիտէր:

Այդ մասին լռում էին նոյն իսկ Ժողովրդի աւանդութիւնը և Թագաւորի դիւանատներում եղած յիշատակարանները:

Պայտառի երկարակեացութեան համբաւը հասաւ ոգիների աշխարհը, և նրանք վճռեցին վերջ տալ նրա երկրաւոր կեանքին:

Ահա երկնքից եկաւ փոքրիկ հրեշտակը և ասաց.

«Պայտառ եղբայր, հերիք է որքան ապրեցար, տուր հոգիդ, երկինք տանեմ նրան»:

Պայտառը պատասխանեց.

«Խնդրեմ մի քանի բոպէ ինձ Ժամանակ տաս, պատրաստուեմ, աղօթքս վերջացնեմ, ապա եկ հոգիս տար»:

— Դէ լաւ, ես այստեղ քարի վրայ կընստեմ ու կըսպասեմ, իսկ դու աղօթքդ վերջացրու:

Փոքրիկ հրեշտակը պագեց քարին, իսկ պայտառը չոքեց աղօթքի. աղօթեց նա, տաք տաք աղօթեց, լաց եղաւ, պաշպչորեց մամուռ քարերը, ձեռքերը երկինք բարձրացրեց ու կրկին աղօթեց, կրկին լաց եղաւ և ապա դիմելով հրեշտակին ասաց.

«Ես աղօթքս վերջացրի, դէ եկ ու հոգիս առ»:

Հրեշտակը փորձեց վերկենալ տեղից, բայց չկարողացաւ. նա կպել էր քարին:

Ահա այնքան զօրաւոր էր պայտառի աղօթքը: Հրեշտակը տեսնելով, որ իր օրը վատ տեղ մթնեց, դիմեց աղաչանքի.

«Պայտառ եղբայր, եկ ինձ այս տանջանքից ազատիր, ես քո հոգին էլ չեմ առնի»:

Պայտառը կարդաց Թարս աղօթքը. հրեշտակն ազատուեց, պոկուեց քարից ու թռաւ սլացաւ ոգիների աշխարհը:

Փոքրիկ հրեշտակից յետոյ մի օր պայտառի մօտ եկաւ Սատանան. նա իր վայելուչ հասակով կանգնեց պայտառի դիմացն ու հպարտութեամբ ասաց.

«Պայտառ եղբայր, աշխարհումս ոչ մի մահկանացու քեզ չափ չէ ապրել. էլ բաւական է, տուր հոգիդ տանեմ»:

— Շատ լաւ, բայց ես անպատրաստ եմ, Սատանայ եղբայր, մի քանի բոպէ ինձ միջոց տուր, աղօթքս անեմ վերջացնեմ, ապա եկ ու հոգիս տար:

— Լաւ, լաւ, պայտառ եղբայր, ես մի փոքր կըսպասեմ այստեղ, մինչև դու աղօթքդ կըվերջացնես. — այս ասաց Սատանան ու նստեց գնդանի վրայ:

Պայտառն այս անգամ էլ առաջուայ աղօթքը կրկնեց, միայն Սատանայ կապելու աղօթքն էլ վրան աւելացրեց ու դարձաւ Սատանային.

«Հէյ հէյ, Սատանայ, ես վերջացրի աղօթքս, վեր կաց ու հոգիս առ»:

Սատանան փորձեց վեր կենալ տեղից, բայց չկարողացաւ. նա կպել էր սալին. շատ քաշեց, քաշքշուեց, ուժ արաւ, պոչը աջ ու ձախ զարկեց, բայց տեսնելով որ ազատուելու ճար չկայ, վերջն աղաչանքի դիմեց:

Պայտառը խղճաց Սատանին, կարդաց թարս աղօթքը. Սատանան ազատուեց ու խելակորոյս փախաւ հեռացաւ:

Պայտառի հոգին առնելու համար այս անգամ երկնքից եկաւ Գաբրիէլ հրեշտակը և տեսնելով, որ պայտառը աղօթքի է չոքել, չուզեց նրա աղօթքը խանգարել, ուստի նստաւ դիմացի ծառին ու ինքն իրեն ասաց.

«Ահա մեր խեղճ պայտառը հիմա կըվերջացնէ իր աղօթքը, ես կիջնեմ ու նրա հոգին կըվերցնեմ. ո՛հ, ինչ լաց ու շիւան են անելու նրա բազմաթիւ որդիներն ու թոռները»:

Պայտառը վերջացրեց աղօթքը և դէպի ծառը

աչքով արաւ. նա սրանով ուզում էր հասկացնել Գաբրիէլին թէ՛ ես պատրաստ եմ, եկ ու հոգիս տար:

Գաբրիէլն ուրախացած ուզեց թևերը բաց անել ու թռչել պայտառի մօտ, բայց սարսափով նկատեց, որ թևերն ու ոտները կպել են ծառին:

«Այս ի՞նչ փորձանք բերիր իմ գլխին, պայտառ եղբայր. քո հոգին քեզ լինի, միայն թէ եկ ինձ այս տանջանքից ազատիր»:

Պայտառը Գաբրիէլի համար վերջին անգամ կարդաց թարս աղօթքն ու ասաց.

«Գնացէ՛ք, եղբայր, գնացէ՛ք ձեր ոգիների աշխարհը. դուք ի՞նչ գործ ունիք մեզ հետ. ինչո՞ւ հանգիստ չէք թողնում մեզ հողեղէններիս. մենք մեզ համար, դուք էլ ձեզ համար»:

Այն օրուանից մինչև այսօր ոգիները աշխարհում սաստիկ իրարանցումն է տիրում, թէ ինչու ոչ ոք չկարողացաւ առնել արդար պայտառի հոգին և ամենքն էլ յաղթուեցան նրանից:

Իսկ արդար պայտառը մինչև հիմա էլ յայտնի չէ թէ աշխարհի որ անկիւնում ապրում է, գործում ու աղօթում. և քանի նա աղօթում է ու գործում, ոչ մի երկնային ոգի չպիտի կարողանայ նրանից դուրս խլել նրա արդար հոգին:

Հա, անչափ մեծ է աղօթքի ոյժը...



ԿԱՐԻՃՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Կարիճը ճանապարհ ընկաւ աշխարհ ման գալու. գնաց գնաց, մի մեծ գետի դէմ առաւ. շատ վեր ու վայր վազվզեց, բայց ոչ մի տեղ անցնելու ճար չգտաւ. ոչ կամուրջ կար և ոչ էլ գերան. խեղճը գետի ափին մնաց շուարած:

Կրիան տեսաւ Կարիճի անելանելի դրութիւնը և կամեցաւ նրան լաւութիւն անել, օգնութիւն հասցնել: Նա դուրս եկաւ ափը և ասաց. «Կարիճ եղբայր, տեսնում եմ, որ լողանալու շնորհ չունիս, եկ մէջքիս նստիր, և ես բեզ առանց վարձի կանցկացնեմ գետի միւս կողմը»:

Կարիճն ուրախութիւնից չգիտէր ինչպէս իր շնորհակալութիւնն արտայայտէր Կրիային: Երկու նոր բարեկամները գետի մէջ տեղը հազիւ էին հասել, որ Կարիճը յանկարծ նկատեց Կրիայի գլուխը դուրս ցցուած ոսկրէ պատեանից, ապա մի քանի անգամ վեր ու վայր շարժեց իր երկար պոչը և զարմանալի ճարպիկութեամբ թոյնը թափեց Կրիայի սառն մարմնի մէջ:

Կրիան այդ անսպասելի հարուածից սարսափած՝ զայրոյթով հարցրեց. «Ապերախտ բարեկամ, այդ ինչ ես անում. ես գետի ալիքները պատառոտելով, քեզ մէջքիս դրած դէպի ազատութիւն եմ տանում, իսկ դու թշնամաբար քեզ թոյլ ես տալիս ինձ կծելու»:

«Ընկեր, խնդրեմ չնեղանաս, — պատասխանեց Կարիճը վերևից, — ես ոչ մի թշնամութիւն չեմ տածում դէպ քեզ. կծելը իմ բնութիւնս է. ես կծում եմ թէ բարեկամի և թէ թշնամու, որովհետեւ ես առանց կծելու անկարող եմ ապրել»:

— Դէ, որ այդպէս է, — վրդովուեց Կրիան, — խնդրեմ դու էլ ինձանից չնեղանաս, ես էլ ուզում եմ իմ սովորութիւնս բանեցնել:

Այս ասաց չասաց Կրիան, իսկոյն խորասուզուեց գետի ալիքների մէջ, և ապերախտ Կարիճը կրեց իր արժանի պատիժը:



ԹԻ ԻՆՉՈՒ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ ՄԱՐԳԻՆ

Երբ Աստուած աշխարհն ստեղծեց վերջացրեց, ամեն բան յանձնեց մարդուն ու ինքն երկինք հեռացաւ։

Աշխարհի հետ կապ պահպանելու նպատակով Աստուած կարգադրեց, որ մարդիկ՝ ծերութեան հասակը հասնելուց յետոյ, երբ զանազան տեսակ նեղութիւնների ու ցաւերի պատճառով կեանքից կը ձանձրանան և գործելու անընդունակ կը դառնան՝ մեռնեն ու Իրեն լուր տանեն այս աշխարհից մարդկանց կեանքի, կենցաղի ու ապրուստի մասին։

Եւ ամեն անգամ, երբ ծերերի հոգիներն՝ իրենց ապականացու մարմինները հողին յանձնելով, իրենք Հօր Աստուծոյ մօտ էին սլանում և Նրա կողմից հարց ու փորձի ենթարկուում, միշտ միևնոյն տրտունջներն էին անում։

— Տէր Աստուած, քո ստեղծած աշխարհում կեանքը ծանր է չափազանց։

— Հիւանդութիւնները աչք բացելու ժամանակ չեն տալիս։

— Եթէ մի օր ուրախութիւն ենք տեսնում, տանեակ տարիներ տրտմութիւն քաշում։

— Ամենուրեք չարը յաղթում է բարուն։

— Կողոպուտը, սպանութիւնները, հալածանքը մեծ ծաւալ են ստացել։

— Կորել է պատիւը, ընկել է ծերերի յարգանքը։

Աստուած ինքն իրեն միտք արաւ և ասաց. «Իրօք միթէ ես այնքան ախտաւոր ու թշուառ եմ ստեղծել աշխարհը»։ Մի օր էլ բարկացած բացականչեց. «Չէ, ես չեմ հաւատում ծերերի խօսքերին. նրանք զրպարտութիւն են անում, սուտ են խօսում և ամեն բան ծայրայեղութեան հասցնում. ե՛կ մի փորձեմ, ամեն հասակի մարդկանցից էլ մօտս կանչեմ ու նրանց էլ խօսեցնեմ. տեսնեմ ի՞նչ կասեն»։

Եւ հրամայեց Աստուած, որ իւրաքանչիւր հասակից մի-մի մարդ, այն է՝ մի մանուկ, մի պատանի, մի երիտասարդ և մի չափահաս մարդ մեռնեն ու զան Իր մօտ։

Դեռափթիթ վարդի նման սիրուն մանուկը կանգնեց Արարչի առաջին և կէս երկիւղած ու կէս կշտամբող ձայնով ասաց.

«Հայր Աստուած, ինչո՞ւ ինձ կանչեցիր այստեղ. ինչո՞ւ զրկեցիր ինձ իմ ծնողներից, ըն-

կերներից. ո՛հ, այնքան քաղցր ու հրաշալի է քո ստեղծած աշխարհը, որ ես կը կամենայի այնտեղ ապրել, ապրել և անվերջ ապրել»... —

Աստուած ժպտաց:

Առաջ եկաւ պատանին. «Արարիչ Աստուած, դու հարցնում ես, թէ ի՞նչ էի անում ես, երբ դու ինձ քեզ մօտ կանչեցիր. ես դպրոց էի գնում. այնտեղ մեր վարժապետը մեզ բացատրում էր քո ստեղծագործած աշխարհի զարմանալի գաղտնիքներն ու վեհութիւնը. մենք սովորում էինք, զբօսնում, երգում ու պարում: Ա՛խ, որքան սըլսրալի ու գեղեցիկ է կեանքը այնտեղ, երկրագնդի վրայ. ես նրա մի վայրկեանը չէի փոխի յաւիտենականութեան հետ»... —

Արարչի սիրտը բերկրութեամբ լցուեց:

Խօսելու հերթը հասաւ կենսական ուժերով վառ ու զեղուն երիտասարդին: Նա ըմբոստ, բողոքող դիրք բռնելով բացականչեց. «Ես բողոքում եմ քո դէմ, Աստուած. ինձ հարկաւոր չէ քո յաւիտենական կեանքը, անդորը անգործունէութիւնը. ինձ մի կերակրի խաբուսիկ յոյսերով. ինձ հաճելի է կռիւը, ոյժը, վրէժը: Ես սիրում էի չքնադագեղ մի աննման կոյս, որի նախշուն աչքերի մի երկրային հայեացքի համար ես պատրաստ էի, ո՛վ Աստուած, և քեզ հետ կռուել. բայց, աւա՛ղ, թշուառ մահը կտրեց իմ կեանքի թելը»... —

Աստուծուն դիւր եկաւ մինչև անգամ երկ-

տասարդի ըմբոստ, բողոքող, միշտ անբաւական ոգին, նրա ոյժը, եռանդը, աւիւնը...

Ամենից վերջը խօսեց հասակաւոր մարդը լուրջ ու խոհեմ դէմքով. «Այստեղ ինձ օտար է ամեն ինչ և ոչ մի բան աչքիս չի երևում. ես այնտեղ թողել եմ մի խումբ փոքրիկ երեխաներ, որոնք աւելի գեղեցիկ են, քան երկնքի աստղերը, քան քո հրեշտակները: Տէ՛ր Աստուած, թող երկինքը, ամբողջ տիեզերքը քեզ լինի, միայն երկիրը մեզ տո՛ւր. թող մենք այնտեղ ապրե՛նք, ապրենք մինչև խորին ծերութիւն... Յետ դարձրու ինձ իմ զաւակների, իմ կնոջ ազգական-բարեկամների մօտ, ես ի՞նչ գործ ունիմ այստեղ... —

Աստուած վշտացաւ մարդու դառն վիճակի վրայ, բայց իր վճիռը չփոխեց... Եւ մարդիկ մեռնում են...



ԱՌԻԾԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Թագաւոր առիւծը մէկ անգամ ժողով գումարեց և կամեցաւ իմանալ, թէ արդեօք հում մեղքերիցն է, որ կենդանիները մէջ յաճախ պատահում են զանազան տեսակ փորձանքներ, տեղի են ունենում մէծ, կոխ և արիւնահեղ խռովութիւններ:

Ամենից առաջ, որպէս վայել էր նրա պատուին, խօսեց գայլը. «Թագաւորն ապրած կենայ, ես բոլորովին անպարտ եմ ու կեանքումս ոչ մի մեղք գործած չկամ. հէնց երեկ հաշուեցի ու տեսայ, որ մանկութիւնիցս մինչև այսօր հօտից յափշտակել ու կերել եմ ընդամենը հարիւր յիսուն ոչխար ու այծ. էհ, միթէ սա մեղք է. չէ՞ որ Աստուած այծերն ու ոչխարները մեզ համար է ստեղծել»:

«Արդար է ասածդ. գայլ եղբայր, — պատասխանեց հզօր թագաւորը. — ես բեղանում ոչ մի մեղք

չեմ գտնում. ուտելու բանը պիտի ուտուի. հօ չի կարելի բաղցած ֆալ: Անցիր աջ կողմս»:

Փայլից յետոյ մըմըթալով առաջ եկաւ արջը և այսպէս խօսեց. «Տէր թագաւոր, ես դեռ գայլիցն էլ մի փոքր աւելի արդար կըլինեմ, որովհետև կերել եմ ամբողջ կեանքումս միմիայն քսան գոմէշ և քառասուն եզն. մի քանի անգամ էլ պատահել է, որ ինձ վրայ յարձակուող որսորդների կողմն ու կուշտն եմ տրորել. միթէ անձնապաշտպանութիւնն էլ է մեղք համարուում»:

«Ապրիս, Արջօ, ապրիս, — մռնչաց առիւծը, — աշխարհիս երեսին մարդուց չար արարած չկայ: Նրանց յանդգնութիւնն այնտեղ է հասնում, որ համարձակոււմ են մինչև անգամ ինձ՝ արքայից արքայիս դէմ որոգայթներ լարել, բայց չգիտեն, որ ես իմ արիւնը էժան գնով ծախող չեմ: Ապրիս, Արջօ, ապրիս. դու էլ վաստակաւոր ես, անցիր աջ կողմս»:

Արջին յաջորդեց աղուէսը, որ պոչը շարժելով ու խորամանկ աչքերը դէպի առիւծը յառած՝ շողոքորթական խօսքով սկսեց.

«Արքայից արքայ, քո ամենակարող կառավարութեան տակ մենք ամենքս երջանիկ ենք: Ես ապրում էի մի մեծ գիւղի մօտ, ուր հինգ հարիւր տնից աւելի բնակիչ կար. ես այնպիսի վարպետութեամբ գործ տեսայ, որ այդ գիւղը մի քանի ժամանակից յետոյ մնաց առանց հաւի ու

աքաղաղի և ստիպուեցայ ինձ համար բնակութեան ուրիշ վայր որոնել»:

«Ապրիս, բաջս,—վրայ բերեց առիւծը:—Ես սիրում եմ, երբ տեսնում եմ, որ խելքի հետ և խորամանկութիւն կայ և խորամանկութեան հետ՝ անգթութիւն: Աղա աղուէս, դու գործնական մեծ խելք ունիս, որ ուշագրութիւն չես դարձնում մարդկանց կեղծ ու պատիր լաց-արտասուքի վրայ: Մենք որ նրանց նայելու լինենք, սովից պիտի կոտորուենք: Անցիր աջ»:

Գազաններից յետոյ խօսելու հերթը հորթուկին հասաւ: Նա խոնարհ կերպով գլուխ տուեց չորս կողմը, վախեց ու ամաչեց. ուզեց մի բան խօսել, չկարողացաւ. լեզուն կարկամեց, սուս արաւ. վերջը ոյժը վրան հաւաքեց և դողդող ձայնով այսպէս սկսեց. «Թագաւոր առիւծ, ես դեռ շատ քիչ եմ ապրել աշխարհիս երեսին. հազիւ տարի ու կէս կըլինի. արած մեղքս չկայ. Թագցնելու էլ ոչինչ չունիմ. միայն թէ իմ տէրը մի խեղճ ու աղքատ մարդ է. ձմրան կիսում նրա յարգն ու խոտը վերջացել էր, փողով առնելու էլ ճար չկար. մենք բաւական ժամանակ քաղցած մնացինք: Մի օր դուրս փախայ գոսից և տեսնեմ, որ մեր հարկան գիւղացին սայլով խոտ է տանում: Ծածուկ յետեից մօտեցայ և հազիւ երկու բերան էի կերել, որ տէրը նկատեց և մէջքիս ձիպոտի սաստիկ հարուածներ տալով փախցրեց»:

Հորթուկը հազիւ էր վերջացրել իր խօսքը, որ առիւծը նրա վրայ գոռաց. «Վայ դու թոյլ ու թշուառ արարած. դու մոռանում ես քո չափն ու սահմանը, յանդգնում ես մինչև անգամ աղքատ գիւղացու սայլից խոտ գողանալ. ահա թէ սրտեղ է Թագնուած մեր բոլոր թշուառութիւնների պատճառը»:

«Այո, այո,—միաբերան հաստատեցին առիւծի ասածը արջը, գայլը, աղուէսը և միւս գազանները:

«Ասա, հաւիկ, դու ի՞նչ մեղք ես գործել» — հարցրեց առիւծը:

«Ե՞ս, ոչինչ. միայն հարկան պառաւը մի օր կտուրին ցորեն էր փռել, գնացի մի քանի հատիկ կերայ, բայց իսկոյն նկատեցին, քարը նետեցին, ոտիս կպաւ, քիչ էր մնացել կոտրուէր»:

«Ո՞ճիր, ոճիր,—գոչեցին ամենքը.—հաւը շատ մեղաւոր է»:


«Դու խօսիր հիմա, խղճուկ գառնուկ, ի՞նչ չար ու բարի է անցել գլխովդ»:

«Աստուծոյ առաջին հոգի ունիմ տալու, ճշմարիտը պիտի խօսեմ: Գարնան մի օր մայրս հանդումն էր. տանտիկինը առաւօտեան իմ մօր կաթը կթել, մառանումը պահել էր. ես սոված էի և ծարաւ. դեռ մինչև երեկոյ շատ ժամանակ կար. գնացի, մառանը մտայ, կաթից մի երկու կում

խմեցի. դրա փոխարէն պառաւը երեկոյեան ինձ իմ բաժին կաթից զրկեց»:

Առիւծը գլխի մագերը փետելով՝ սոսկալի վայնասուն բարձրացրեց. «Տէր իմ Աստուած, իմ թագաւորութեան մէջ ռըպիսի ոճրագործութիւններ են տեղի ունենում, և ես ոչինչ չգիտեմ: Ես հիմա եմ հասկանում, թէ ով է մեր բոլոր ձախորդութիւնների, վէճերի, կռիւների ու արիւնահեղ խռովութիւնների պատճառը. դրանք են՝ հորթը, հաւը և գառը»:

Հորթը, հաւը և գառը կրեցին իրենց արժանի պատիժը. նրանց անուշ մսով իրենց բերանը քաղցրացրին առիւծը, գայլը, արջն ու աղուէսը, սակայն առիւծի թագաւորութեան մէջ վէճը, կռիւներն ու անկարգութիւնները շարունակւում են մինչև այսօր:



ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Մէկ անգամ աղքատ Սիօնը իր հարուստ հարեան Շարուրից փող կորզելու նպատակով խորամանկութեան դիմեց և կաշեայ պարկն ուսին կանգնեց հարեանի դրան առաջին:

Շարուրը ապարանքից դուրս եկաւ պատըշգամբ:

— Ի՞նչ ասելիք ունիս ինձ, բարեկամ, — հարցրեց Շարուրը:

Սիօնը ներքևից բարձր ձայնով աղաղակեց. «Մենք եղբայր ենք»:

— Ճշմարիտ է, ես այդ գիտեմ, բայց դու դրանով ի՞նչ ես ուզում հասկացնել ինձ:

— Ես դրանով բեզ ուզում եմ ասել, որ մենք՝ իբրև եղբայրներ, իբրև մի հօրից և մի մօրից սերուած ժառանգներ, պէտք է ամեն ինչ հաւասար ունենանք. այն ինչ՝ դու ամեն բան ունիս, իսկ ես ոչինչ չունիմ. ուրեմն տո՛ւր ինձ իմ եղբայրական բաժինը. տո՛ւր ինձ քո ոսկիների, քո ամբողջ կարողութեան կէսը:

— Հակաճառելու ոչինչ չունիմ, բարի հարեան, — պատասխանեց Շարուրը հանդարտութեամբ, —

պահանջդ իրաւացի է. սակայն խնդրեմ ինձ մի շաբաթ ժամանակ տուր, որ կարողանամ փողերս հաշուել, կարողութիւնս կարգի բերել, եղած-չեղածս ցուցակագրել և քեզ հասանելիք բաժինը որոշել:

Սիօնն ուրախութիւնից գլուխը կորցրած բարձրաձայն աղաղակեց. «Կեցցէ հարեանս, կեցցէ հաւասարութիւն, կեցցէ մարդկանց եղբայրութեան գաղափար»:

Աղբատն իր մտքի պարզութեամբ չափազանց միամիտ է և դիւրահաւան:

Մի շաբաթն անցնելուց յետոյ Սիօնը նոյն կաշեայ սլարկը կապեց շալակին ու վաղ առաւօտեան կանգնեց Շարուրի դրանը:

— Համեցիր վերև, համեցիր վերև, — սրտագին ձայնով բացականչեց Շարուրը տեսնելով Սիօնին, — քո բաժինն արդէն պատրաստ է, եկ և ստացիր:

Սիօնն ուրախ-ուրախ վերև բարձրացաւ մարմարինի սանդուղտներով. քիչ էր փնացել, որ նա Շարուրի վզովն ընկնէր ու համբուրէր նրան, բայց այդ վայրկեանին Շարուրը մի ինչոր բան սեղմեց նրա բռի մէջ:

Սիօնը յանկարծակի եկաւ, տարակուսանքով բաց արաւ բուռը և տեսաւ այնտեղ մի պղնձեայ դրամ:

— Սա ի՞նչ է նշանակում, եղբայր, — կմկմաց Սիօնը:

— Դա ինձանից քեզ հասնելիք բաժինն է:

— Ի՞նչպէս...

— Նս իմ խոստացածը կատարեցի:

— Եղբայր, ես կատակ անելու սիրտ չունիմ, — հակաճառեց Սիօնը:

— Աստուած մի արասցէ այսպիսի ծանրակշիռ հարցերի մէջ կատակներ անել. լսիր և ահաւասիկ ես բացատրեմ քեզ, թէ բանն ինչու՞ն է: Դու առաջիկ, որ բոլոր մարդիկ եղբայր են, որովհետև նրանք սերուած են մի զոյգ ամուսիններից. ասածդ զուտ ճշմարտութիւն է. այդ իսկ հիման վրայ էլ ես մի շաբաթ նստայ, հաշուեցի, չափեցի ու ձեռքի և տեսայ, որ քեզ եղբայրական բաժին ինձանից հասնում է միմիայն ահա այդ պղնձեայ սև ստակը:

— Այդ ի՞նչպէս... գունատուեց Սիօնը:

— Լսիր. աշխարհիս երեսին մարդկանց թիւն է բիւր-բիւրոց. ես էլ իմ կարողութիւնս, ունեցած-չունեցածս ամենաբարեխիճօրէն հաշուեցի և տեսայ, որ հաւասար է բիւր-բիւրոց ստակի. հետևապէս ինձանից իմ ամեն մի եղբօրս հասնում է մի ստակ. դու քոնն ստացել ես արդէն, ուրեմն բարի ճանապարհ...

«Հաւասարութիւն»... դողդոջ շրթունքներով շշնջաց յուսահատ աղքատը, և սև ստակը վայր գորուեց նրա թուլացած ձեռքից մեծատան թաւշեայ գորգերի վրայ...

ՈՍԿԻ ՉԿՆԵՐ

Մի դիշեր աղքատ Համալը երազ տեսաւ:

Մի ծեր մարդ եկաւ և նրան ասաց.

«Խեղճ մարդ, էլ բաւական է որքան տանջուեցար. տեսնո՞ւմ ես, որ բաղդդ կապուել է. էլ մի սպասիր, վաղ առաւօտեան վեր կաց, գնա ծովի ափ և այնտեղ մի ձկնորս կը տեսնես. խնդրիր նրան և ասա, որ մի անգամ էլ թող բո բաղդը փորձելու համար նա ուռկանը ծովը ձգէ, և ինչ որ դուրս գայ, թող բոնը լինի»:

Համայն առաւօտը վաղ քնից զարթնելով ուրախ-ուրախ դէպի ծովի ափ գնաց:

Ձկնորսն արդէն սկսել էր իր գործը:

— Բարձր աջողում, ձկնորս եղբայր. այս գիշեր երազ եմ տեսել. ասա «Աստուած բարին կատարէ»:

— Դէ, Աստուած բարին կատարէ. ասա տեսնեմ, դրա վերջաւորութիւնն ի՞նչ է լինելու:

— Դրա վերջաւորութիւնն այն է լինելու, որ

հէնց հիմա թոռդ ձգես ծովը և առաջին անգամ ինչ որ դուրս գալու լինի՝ ինձ պիտի տաս:

— Գլխիս վրայ. հէր օրհնած, դա էլ հօ մի մեծ բան չէ. մէկ չէ, կուգես երկու անգամ ձգեմ, երեք անգամ... որքան սիրտդ կամենայ:

— Չէ, երազումս տեսել եմ մի անգամ, հերիք է:

«Եւ եօթն անուն, դու օգնական լինիս». երեսը խաչակնքեց ձկնորսն ու թոռը դէպի ծովը նետեց:

Ծովը փոքր ինչ ալեկոծ էր. բայց դա ոչինչ. ասում են, որ ձուկը ափին մօտենում է աւելի փոթորկի ժամանակ:

— Աղօթք արա, Համալ, աղօթք արա, — գոչում էր ձկնորսը թոռը քաշելով. — գուցէ բաղդիցդ Աստուած մի լաւ բան հասցնէ:

«Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա»... անվերջ կրկնում էր Համալը, և դրանից էլ աւել ուրիշ աղօթք չգիտէր խեղճը:

Ահա ձկնորսը դուրս քաշեց ուռկանն աւազոտ ափի վրայ և կկգեց ձկները դուրս հանելու. բայց ի՞նչ հրաշք էր, որ նա տեսաւ. ուռկանի մէջ նա տեսաւ մի ոսկի ձկնիկ և վախեցած ուզում էր ոսկի ձկնիկը յետ ձգել ծովը, որ աղքատ Համալը վրայ վազեց ու ասաց.

«Աստուած ինչ որ ուզարկել է, իմ բաղդն այն է. տեսնենք վերջերս ի՞նչ է լինելու»:

Աղքատ Համայնը նախապաշարուած սրտով վեր առաւ ոսկի ձկնիկը և քաղաք վերադարձաւ. քաղաքում շատերը տեսան ոսկի ձկնիկը, բայց ոչ ոք սիրտ չարաւ նրան Համայնի ձեռքից գնելու, որովհետեւ ամենքն էլ այդ բանը մի չար նշան էին համարում:

Վերջապէս քաղաքի հեռու արուարձաններէն մէկում մի աղքատ հրէայ գնեց ոսկի ձկնիկը:

Համալն ստացած փողերը տարաւ, ընկերներին հետ մի քանի օր շարունակ կերաւ ու խմեց, ուրախութիւն արաւ և երբ եղած չեղածը կերաւ վերջացրեց, առաջուայ նման գլուխը քաշ՝ դարձեալ համալութիւն սկսեց անել:

Իսկ հրէան մի գեղեցիկ աւազան շինել տրւեց, ոսկի ձկնիկը մէջը տեղաւորեց և սկսեց երկրէ-երկիր, աշխարհէ-աշխարհ ման գալ ու բարձր ձայնով աղաղակել.

«Պարոններ և տիկիներ, եկէ՛ք ինձ մօտ. ես անսխալ գուշակում եմ ապագան. ամեն մարդու ճակատագիրը պարզ իր առաջին կըգնեմ. ես հասկանում եմ ոսկի ձկնիկի լեզուն. նա ինձ ամեն բան յայտնում է»:

Աշխարհս լիքն է խելքից աղքատ մարդկանցով. խելօքը քիչ է, բայց յիմար սրբան կամենաս:

Երբ որ հրէան ոսկի ձկնիկը դնում էր ի ցոյց հասարակութեան և երբ ոսկի ձկնիկը յոգնածութիւնից թէ քաղցածութիւնից բաց ու խուփ էր անում բերանը, միամիտ ամբոխն ապուշ կըթած սովորաբար հարցնում էր. «Արդեօք ի՞նչ է ուզում ասել ոսկի ձկնիկը»:

Սորամանկ հրէան մօտ էր գալիս ու պատասխանում.

«Ոսկի ձկնիկն անսխալ գուշակելու համար ժողովրդից տուրք է պահանջում և այդ տուրքը կարող է միմիայն ոսկով լինել»:

Եւ դիւրահաւան մարդիկ ոսկին բռներով թափում ու թափում էին ոսկի ձկնիկի առաջը:

Հրէան հարստանում էր ու անվերջ հարստանում. նրա հարստութիւնն առասպելական չափերի էր հասել. իսկ անբաղդ Համայնը վաղուց էր վերջացրել ոսկի ձկնիկի համար իր ստացած մի քանի թշուառ ստակը և դարձեալ մշակութիւն էր անում:

Մի օր երազում նա դարձեալ տեսաւ ծերունուն և վաղ առաւօտեան ծովափ գնաց:

— Զկնորս եղբայր, ես բանի ժամանակ է քաղցած ու անգործ եմ մնացել. կարելի՞ է արդեօք քեզ խնդրել, որ այս անգամ էլ բաղդս փորձելու համար թող ծովը ձգես:

— Այս չալ-չալ աչքերիս վրայ, Համալ ջան, — պատասխանեց ձկնորսը, — քո ազիզ խաթրու հա-

մար ես պատրաստ եմ ամեն զոհողութիւն յանձն առնելու:

Այս ասեց չասեց ձկնորսը, մաշուած ուռիանը ծովը նետեց և դուրս բերեց դարձեալ մի ոսկի ձկնիկ, բայց առաջուանից աւելի մեծ ու աւելի գեղեցիկ փայլով:

Աղքատ Համալը ոսկի ձկնիկն այս անգամ ուղիւ Անճար թագաւորի պալատը տարաւ:

Ժողովուրդն Անճար թագաւորին չէր սիրում. թէև նա, ճշմարիտն ասած, չար մարդ չէր, բայց չափազանց անբաղդ էր. պատերազմ էր սկսում, յաղթում էր. ուզում էր ժողովրդին հողեր բաշխել կամ հարկերը թեթեացնել, անվերջ վէճեր ու խռովութիւններ էին ծագում իշխանների և ժողովուրդի մէջ, տեղի էր ունենում սով, յաճախ պատահում էին պէս-պէս հիւանդութիւններ, և այդ ամենի մէջ հասարակական կարծիքը մեղաւոր էր համարում Անճար թագաւորին:

Ոսկի ձկնիկն Անճար թագաւորի համար երկնքից իջած մանանա դարձաւ, նրա անփոխարինելի խորհրդակտնը:

Պէտք էր պատերազմ սկսել, մի որևէ նոր բան ձեռնարկել, դաշն կապել կամ խաղաղութիւն կնքել. պէտք էր աղջիկ կամ տղայ ամուսնացնել, թէ ժողովրդի բարիքի մասին հոգալ—ոսկի ձկնիկը երազում երևում էր թագաւորին, նրա հետ մարդկային լեզուով խօսում ու ամեն բան հասկացնում:

Կարծես մոգական գաւազանի մի շարժումով Անճար թագաւորի տէրութեան մէջ ամեն բան փոխուեցաւ դէպի լաւը. նրա պատերազմները հիմա միշտ յաղթութեամբ են վերջանում, թշնամիները դաշնակից դառնում. նրա ժողովուրդը հիմա ուտելու առատ հաց ունի և մաքուր ջուր. այլ ևս նրա պետութեան սահմաններին չի մօտենում սովը, մահտարածամբ:

Անճար թագաւորի երկիրը դրախտ դարձաւ. նա երջանիկ էր այժմս, և ամենքն օրհնում էին նրա կեանքը:

Եւ ոսկի ձկնիկն ապրում էր պալատական այգիների բլրեղանման աւազաններում և որպէս իմաստուն պատգամախօս ամենայն օր նորանոր հնարներով ու գիւտերով հարստացնում էր իր բաղաւոր տիրոջ բազմաթիւ հպատակներին:

Իսկ աղքատ Համալը թագաւորի տուած մի բանի ոսկին արդէն վաղուց էր վերջացրել ու դարձեալ մշակութեան փէշից էր բռնել:

Անցան օրեր ու տարիներ. վաղածանօթ ծերունին մի գիշեր դարձեալ երևեցաւ աղքատ Համալին ու ասաց. «Գնա ծովափ, խնդրիր ծերուկ ձկնորսին, որ մի անգամ էլ քեզ համար ուռիանը ծովը ձգէ. բայց զգուշացիր, այս նուագ ինչ էլ դուրս գալու լինի քո բաղդից, չծախես, այլ բեզ համար պահիր»:

Առաւօտ վաղ, դեռ բարրի լոյսը չբացուած, Համալը քնից զարթնելով ծովափ դնաց:

Ձկնորսն ուռկանը ծովը նետեց և դուրս բերեց չտեսնուած, չլսուած մեծութեամբ մի ոսկէ ձուկ:

Համալը տուն տարաւ ոսկի ձուկը, բաց արաւ փորը և փորից դուրս եկաւ մի սև սաթի գաւաթ մէջը լիքը մարգարիտներով:

Համալը սաթի գաւաթը պահեց իր համար, իսկ մարգարիտները ծախեց, այդ փողով քաղաքի կենդրոնում մի լաւ տուն առաւ գեղեցիկ պարտէզով ու սկսեց իր կնիկայ հետ ուրախ ու երջանիկ ապրել:

Գարուն էր. օրը տաք, սար ու դաշտ պէսպէս ծաղիկներով լեփլեցուն:

Մարդ ու կնիկ դուրս եկան զբօսանքի դէպի կաթնաղբիւրի կողմերը:

Կաթնաղբիւրի մօտ ոչ ոք չկար. արևը փայլում էր, ծաղիկները գեղգեղում:

Երբ նրանք ջուր խմեցին ու նստան հանգըստանալու, կնիկն ասաց իր մարդուն.

«Այ մարդ, եկ քեզ լողացնեմ կաթնաղբիւրի ջրով. ասում են, որ սա դեղ է ամեն հիւանդութեան դէմ և մարդու կեանքը երկարացնում է»:

Մարդը կնիկայ խօսքը չկոտրեց:

— Դէ, հանիւր շորերդ ու պալլիր ահա այս քարի վրայ:

Մարդը լռելեայն կատարեց կնիկայ հրամանը: Կնիկը սև սաթի գաւաթն առաւ ու աղբիւրից ջուր վերցնելով ածեց մարդու գլխին:

— Ուխտայ հոգիս, դուրացար, — ասաց կնիկը՝ կրկին գաւաթը դէպի աղբիւրը տանելով:

— Այ կնիկ, հերիք է, հերիք. կասես կաշիս կուչ է գալիս, մազերս քաշոււմ են:

— Սուս արա՛, անմիտ մարդ, դա քո կեղաոտ մարմինդ է մաքրոււմ ու ոսկի գոյն ստանում. ապա տես-տես, մորուքիցդ ոսկի շիթեր են կախ ընկել:

— Չեմ ուզում, կնիկ, չեմ ուզում. ոսկին էլ քեզ, ոսկեայ շիթերն էլ:

Սակայն կնիկը մարդու խօսքին ուշադրութիւն չդարձրեց և ածեց նրա գլխից վայր երրորդ, չորրորդ... գաւաթները:

«Ուխտայ, ուխտայ, այս ինչ գեղեցիկ է իմ մարդը, — անընդհատ ածում ու կրկնում էր կնիկը. — տեսէ՛ք հիմա ամբողջապէս ոսկուց է նա. աչքերը ոսկի, բերանը ոսկի, ականջները, ձեռները, ոտները...»

Թշուառ կնիկն իր ոգևորութեան մէջ չէր էլ նկատում, որ խեղճ մարդն արդէն վաղուց անշնչացած՝ ոսկեղօծ դիակ էր դարձել:

Կատարեալ երջանիկ լինելու համար նա ցանկացաւ իր մարդու նման ոսկեհոռ, ոսկեգանգուր մազեր ունենալ, նրա պէս քիթ, բերան... Նա

նստեց աղբիւրի մօտին ու արագ-արագ, որքան
ներում էին ուժերը, սկսեց գաւաթով ջուրն իր
զլխին ածել. ածեց, ածեց, այնքան ածեց, մինչև
որ ինքն էլ իր մարդու նման ոսկեզօծ արծառ
դարձաւ:

Ժողովրդի մէջ մինչև օրս էլ մնացել է մի
սոսկալի հաւատալիք թէ՛ երբ երկրիս վրայ
թագաւորներն արիւնահեղ պատերազմներ են
մղում իրար հետ ոսկու համար, երբ մշակ, բան-
ւոր ժողովուրդը կռւում ու կոտորում է ոսկու
համար, երբ հարուստ մեծատունը գիշեր-ցերեկ
ոսկի է գոռում ու անգթօրէն մաշկում է աշխա-
տաւորի կաշին,— ահա այն ժամանակ կաթնաղ-
բիւրի ոսկի արծառները— Համալն ու իր կնիկը—
մութ քարանձաւից լոյս աշխարհ են դուրս գալիս
ու բարձր ձայնով գոռում ու գոչում:

«Խեղճ, թշուառ ու անմիտ մարդիկ, մի
կուրանաք. աշխարհիս երեսին ամենաւատ բանը
ոսկին է. նա փակում է ձեր աչքերը, խլացնում
ձեր ականջները. նա սպանում, մահացնում է
ձեր սիրտն ու հոգին... Իսկ ամենալաւ բանը
աշխարհումս աշխատանքն է, նեղութիւնը, տան-
ջանքը, աղքատութիւնը, որովհետև նրանք բաց
են պահում ձեր աչքերը, ականջները, լեզուն:

նրանք կենդանի են պահում ձեր սիրտը, հոգին,
զգացմունքները...

Սակայն կաթնաղբիւրի ոսկեայ արծառների
այդ ողբի ու բողոքի ձայնը տակաւին չի լսել և
ոչ մի մահկանացու աշխարհիս երեսին:



ԱՂՔԱՏՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Երբ հռովմայեցի զինւորները պատրաստուում էին խաչել Յիսուսին, մերկացրին նրան: Օրէնքով դատապարտեալի շորերը պատկանում էին դահիճներին ու նրանց գործակից զինւորներին: Յիսուսի զգեստների համար մեծ վէճ և աղմուկ ծագեց, որովհետև Յիսուսի շորերը քիչ էին, իսկ նրանցից օգտուել ցանկացողները շատ:

Երբ շորերի բաժանման գործում հռովմայեցի զինւորներն ու հրէայ պահապանները որոշ համաձայնութեան դալ չկարողացան, դիմեցին բռնի ոյժի և սկսեցին մէկը միւսի ձեռքից քաշ-քշել, պատառոտել ու գզգզել շորերը:

Յիսուսի մայրը, որ այդ ժամին ներկայ էր Գողգոթայի գագաթին և իր սուրբ մատներով էր կարել իր Աստուածային որդու զգեստները՝ խիստ ցաւ զգաց սրտի մէջ և ձայնը բարձրացնելով աղաղակեց.

—Որդեակ իմ, բաւական է. մինչև երբ համբերես, պատժիր դրանց:

Յիսուս, որ գիտէր միայն ներել, զթալ ու ողորմել՝ խաչի բարձրութիւնից գլուխը խոնարհեցրեց և տեսնելով մարդկային անյագ ընչասիրութեան ծարաւը, շատ վշտացաւ:

Մայրը որդու լուսթեան վրայ կրկին ձայն բարձրացրեց.

—Որդեակ իմ, մինչև երբ...

Այդ միջոցին խաչեցեալի շորերն՝ արդէն ծուլիկ-ծուլիկ պատառոտուած՝ անցնում էին մի զինւորից միւս զինւորի ձեռքը և կոխտուում նրանց ոտների տակ:

Այդչափ մեծ էր մարդկանց ազահութիւնը:

Չափն արդէն անցել էր և բաժակը լցուել: Յիսուս հրամայեց, որ իր պատառոտած շորերի կտորներն աղքատներ դառնան: Հրամանն իսկոյն կատարուեց: Յիսուսի զգեստի կտորներն աղքատներ դարձան ու յարձակուեցան իրենց տանջող ու պատառոտող զինւորների վրայ: Վերջիններս յանկարծակի գալով, ուղեցան փախչելով մի կերպ ազատուել, բայց նրանց համար այլևս ազատութիւն չկար, որովհետև հիմա էլ աղքատներն էին ընկել նրանց յետևից և աշխատում էին շորերը խել նրանց հագից ու իրենց մերկ մարմինները ծածկել:

Գողգոթայի վրայ ծնունդ առած կոիւրդ աղքատների և նրանց հարստահարողների միջև շարունակուում է և այսօր:



ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ

Երբ ժամանակի լրումից յետոյ աշխարհի վախճանը մօտենայ, Ղովտի կնոջ աղի-արձանը Մեռեալ ծովի հովտում սոսկալի երկունքով պիտի բռնուի. նրա ցաւերի սաստկութիւնից կը դողան երկինքն ու երկիրը, տեղի կունենան աղէտալի երկրաշարժներ մեծամեծ աւերմունքներով, և ամպրոպային երկինքն ահեղագոյ ուրոտումով անվերջ շանթ ու կայծակ կը տեղայ մարդկանց գլուխներին:

Երկարատև ու մեղսատանջ երկունքից յետոյ աղի-արձանի որովայնը կը բացուի և այնտեղ դժոխային տանջանքներով ծնունդ կառնէ Նեոը:

Նրա մանկութիւնը մի ակնթարթի տևողութիւն կունենայ, իսկ կեանքը կը լինի երկար, արկածալի ու մռայլ: Նա կունենայ կասկարմիր, նօսր և երկայն մորուս. իսկ անճոռնի, ծուռ-ծուկալ պոզերի ծայրին սև սաթի սառն փայլով պլպլացող աչքեր. ոտների վրայ նրա ճանկերը կը լինին ուրուրի, իսկ պոչը՝ վազրի: Նեոը ծնուած օրն և եթ կընստի երկայնոտն էշի մէջքին և գիշեր ու ցերեկ անդադար գնալով՝ կանցնի աշխարհի մի ծայրից մինչև միւսը:

Նրա առաջ ձորերը կը լցունեն և բլուրները կը խոնարհուեն. դժուարինը կը դիւրինանայ և առապարը հարթ ճանապարհ կը դառնայ, որովհետև Նեոի նստած էշն այնպիսի յատկութիւն կունենայ, որ դէպի լեռան գլուխը բարձրանալիս յետին ոտները կերկարանան, իսկ լեռներից ցած իջնելիս՝ առաջինները:

Եւ այսպէս եօթն օրուայ ընթացքում աշխարհի շուրջը պտտելուց յետոյ՝ Նեոը յոգնած ու տանջուած կանգ կառնէ Մեծ Ովկիանոսի ծովի ափին և սոսկալի ցաւերով բռնուած չարաչար երկունք կը քաշէ:

Միայն եօթն օր աներևակայելի դժոխային ցաւերով տանջուելուց յետոյ նրա առատաբուրդ արգանդը կը բացուի և այնտեղից փեթակի մեղուների նման անթիւ, անհաշիւ համարով ծնունդ կառնեն սողմացիներն ու գոմորացիները, որոնք իրենց լկտի արարքներովը, տափալի, ցոփ կեանքով ու անառակ վարք ու բարքով աշխարհը կը լցնեն և նրան մեղքի ծով կը դարձնեն:

Սրանց պոռնկութիւնից և անբնական կենակցութիւնից կայլասերուեն աշխարհն ու մարդիկ, կը ծնունեն այնպիսի մարդիկ, որոնց վիթխարի ականջները մինչև գետին կը հասնեն, այնպէս որ՝ քնելու ժամանակ նրանցից մէկը կարող է ծառայել որպէս վերմակ, իսկ միւսը՝ որպէս ներքնակ. կը բազմանայ միակնիների թիւը, որոնց աչքերը ճա-

կատի բարձրում կրկինն, որով մանգալն ու շարժողութիւնը կը դժուարանայ: Աշխարհ կը գան նոյնիսկ մարդիկ բոլորովն առանց գլխի. սովորաբար գլխի վրայ եղած դործարանները տեղաւորուած կըլինին կրծքի վրայ: Կըծնուեն այնպիսի մարդիկ, որոնց մի ոտն աւելի մեծ կըլինի, քան ամբողջ մարմինը, մի մասն աւելի մեծ՝ քան ամբողջ ձեռքը: Եւ մի ձեռքը ամպհովանու նման գլուխների վերեւ պահելով՝ նրանք կարող են պաշտպանուել արեւից և կամ անձրեւից ու կարկտից:

Վերջ ի վերջոյ մարդիկ սովից, զանազան տեսակ տանջանքներից, հիւանդութիւններից, ցաւերից ու զրկանքներից այն աստիճան կը մաշուեն, կը հիւժուեն ու կը փոքրանան, որ կը սկսեն ապրել մեր ժամանակի մարդկանց թողած հողաթափերի, տրեխների և կօշիկների մէջ և մեծ հիացմունքով և երախտապարտ սրտով կը յիշեն մեզ, որ իրենց համար այնպիսի շքեղ ու ընդարձակ պալատներ ենք թողել մենք՝ նրանց հեռատես նախնիքներս:

Այս ամենից յետոյ, երբ ժամանակի լրումը կըլինի, Նեուր ցած կը գայ էշի վրայից, կը բարձրանայ աշխարհիս երեսին ամենաբարձր ձիւնապատ սարի գլուխը և այնտեղից աշխարհաստան գարշիլի ձայնով կը սկսէ բոլոր կենդանիների նմանութեամբ գողալ, կռանչել, մլաւել, հաջել, ոռնալ, սուլել եօթն օր ու եօթ գիշեր:

Նրա մահաշունչ բերանից սառնասառնուռ ու ժգնութեամբ կը սկսէ փչել այնպիսի սառն քամի, որի համեմատութեամբ մեր այժմեան քամիները ծիծաղելի կերևան. և մի ակնթարթի մէջ կը մահանայ ու կը մեռնի ամենայն շնչաւոր և անշունչ առարկայ աշխարհիս վրայ. նրանք ամենքն իրենց տեղում կարճանանան ուղիղ այն գիրքով և ձևով, ինչպէս նրանց վրայ հասել էր Նեուրի մահաշունչը:

Իսկ ինքը՝ Նեուր կապիկի կնճռոտ դէմքով, մազապուրծ, պողերի ծայրին սև դժոխային աչքերով, ուրուրի ճանկերով և վազրի պոչով կկցած Ովկիան ծովի ափին, բարձր լեռան դադաթին, բնութեան կատաղի արհաւիրքների ու ցուրտ սառնամանքի մէջ դեռ երկար, շատ երկար սոսկալի սոսկումներով պիտի ակնկալէ իր մահուանը և աշխարհի վախճանին...

Եւ որքան ուշ վրայ հասնի աշխարհի վախճանը, նոյնքան սարսափելի կըլինի նրա կեանքը:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Հովուի աղօթքը	3
2. Ոսկի մատանի	6
3. Աստուածամօր նշանադրութիւնը	15
4. Տաշտ 'ի կռնակ	18
5. Սատանան	21
6. Համբարձման դիշերը	26
7. Աղբատ քարտաշը	30
8. Աղատութիւն	34
9. Ո՞րքան հող է հարկաւոր մարդուն	38
10. Սողունների ու միջատների ծագումը	43
11. Շունն ու կատուն	46
12. Արտասուքի աւազանը	51
13. Խոզը և Արծիւը	68
14. Ա.խարհի ստեղծագործութիւնը	70
15. Երկնքից կախած շղթաները	78
16. Արդար պայտառը	82
17. Կարիճն ու Կրիան	86
18. Թէ ինչո՞ւ են մեռնում մարդիկ	88
19. Առիւծի դատաստանը	92
20. Հաւասարութիւն	97
21. Ոսկի ձկներ	100
22. Աղբատների ծագումը	110
23. Աշխարհի վախճանը	112

7	1. Einleitung
8	2. Die Aufgabenstellung
10	3. Die Aufgabenstellung
18	4. Die Aufgabenstellung
21	5. Die Aufgabenstellung
26	6. Die Aufgabenstellung
30	7. Die Aufgabenstellung
34	8. Die Aufgabenstellung
38	9. Die Aufgabenstellung
43	10. Die Aufgabenstellung
46	11. Die Aufgabenstellung
51	12. Die Aufgabenstellung
58	13. Die Aufgabenstellung
70	14. Die Aufgabenstellung
78	15. Die Aufgabenstellung
82	16. Die Aufgabenstellung
88	17. Die Aufgabenstellung
88	18. Die Aufgabenstellung
92	19. Die Aufgabenstellung
97	20. Die Aufgabenstellung
100	21. Die Aufgabenstellung
110	22. Die Aufgabenstellung
112	23. Die Aufgabenstellung



ՀՀ Ազգային գրադարան



NL0360934

57.288

